NN 3-4 (32-33) ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2007թ.
www.dzaynhamshenakan.org

ՁԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ | Անվճար

Կարեն Հրանտի Խանլարին (Խանլարյան) ծնվել է 1964թ. Թեհրանում: Սովորել է Թեհրանի Մարիամյան հայոց ազգային միջնակարգ դպրոցում, ավարտել է Թեհրանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի շինարարական ճարտարագիտության բաժինը: 2006-ին ստացել է սեյսմիկ ճարտարագիտության դոկտորի աստիճան: Նա հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի շարք գիտական հոդվածների հեղինակ է. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը 2005թ. հրատարակել է նրա «Հայ բնակչութեան էթնոկրօնական վերապրուկները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005թթ.)» գիրքը: Կարեն Խանլարին Իրանի Սեյսմիկական ճարտարագիտության և սեյսմոլոգիական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող է և դասավանդում է Իրանի Իսլամական ազատ համալսարանում:

ԱՅՆՏԵՂ ԴԵՌ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐ ԿԱՆ...

ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆ

Սոյն ուսումնասիրութիւնը նպատակ է հետապնդում վեր հանել Հայոց Ցեղասպանութեան իրականացումից յետոյ Թուրքիայի Հանրապետութիւնում, Արեւմտեան Հայաստանում, Հարաւ-Արեւմտեան Հայաստանում, Պատմական Կիլիկիայում, Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում գոյատեւած հայութեան էթնոկրօնական այլակերպման ու վերակերպման գործընթացը՝ մօտաւոր գնահատումներ տալով տեւել տարրի ներկայ իրավիճակի մասին, լուսաբանելով նրա հոգեմտաւոր այժմէական ներաշխարհի ծալքերը: Այս իմաստով նիւթը կարող է համեստ սկիզբ համարւել հետագայ հետազօտութիւնների համար:

Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստեանը 1980թ. Երուսաղէմում բանախօսութեան մէջ հետեւեալն է ասում գաւառահայութեան մասին. «Ձեզ կը ներկայացնեմ գաւառահայութեան չորս խաւերը, ինչպէս որ տեսել եմ նրանց.

Ամենապատիվ Տ. Շնորհք արք. Գալուստեան

«Ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզւել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թւով:

Բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնւում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն: Իսկ լսածիս համեմատ՝ Սասնոյ լեռների վրայ էլ ցրւած հայեր կան, որի մասին ժամանակին ձեռքս անցաւ 35 գիւղերի մի անւանացանկ:

Գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատւելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

Դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժւարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»[1]:

Թէեւ Շնորհք պատրիարքի այս տեղեկատւութեան համեմատ՝ ներկայիս կացութիւնը փոխւած կարելի է համարել, այնուամենայնիւ՝ դա բաւարար հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայութեանը տիպաբանական իմաստով բաժանել երեք խմբերի.

ա) «Պաշտօնական» հայութիւն. այս տեսակը Հայ Առաքելական, Կաթողիկէ կամ Աւետարանական եկեղեցիներին կապւող համայնքների տեսքով գոյատեւել է զանազան նահանգներում եւ աւաններում: «Պաշտօնական» հայութեան կապը Կ. Պոլսի կազմակերպւած համայնքի հետ քիչ թէ շատ պահպանւել է մանաւանդ պատմական Կիլիկիայում: Պարբերական գաղթերից յետոյ այժմ նրանց թիւը գնահատւում է ոչ աւելի քան հինգ հազար մարդ[2]:

բ) «Իսլամացած» հայութիւն. այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնտահայ եւ համշէնահայ, մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք բնակւում են սեւծովեան ափերիզում. պատմական Ջանիկից (Սամսունից) մինչեւ հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում: «Իսլամացած» տիպն իր համեմատական լայն շրջագծում պարունակում է այստեղ նաեւ «կէս-կէս» եւ «հայ-լազ» կոչւած խմբերին նաեւ. «Այդ բնակչութիւնը, որը զգալի տեսակարար կշիռ ունէր Պոնտական լեռներին յարող գաւառներում (Սպեր, Թորթում, Բաբերդ, Համշէն եւ այլն) գրականութեան մէջ յայտնի է «կէս-կէս» անունով (այսինքն՝ կէս հայ քրիստոնեայ եւ կէս՝ մահմեդական)... Լազիստանում եւ նրան յարող շրջաններում ռազմատենչ լազերի ճնշումներից խուսափելու նպատակով «կէսկէսների» մի մասն էլ հանդէս էր գալիս «հայ-լազ» անունով»[3]: Հիմնւելով բազմաթիւ տեւեալների վրայ «իսլամացած» հայութեան թւաքանակը կարելի է գնահատել միլիոնից աւելի, մինչեւ 1,300,000 մարդ[4]:

գ) «Թաքուն» հայութիւն. այս տեսակը բռնի կերպով եւ իր ֆիզիկական գոյութիւնը պահելու հարկադրանքի տակ իսլամացել է հայկական պարբերական կոտորածների ժամանակաշրջանից (1896-1923 թթ.) սկսած եւ ապրում է աշխարհագրական մեր բազմաթիւ առանձին, քրդաբնակ եւ թուրքաբնակ գիւղերում ու գիւղակներում: Այս տեսակը վերոնշեալ «իսլամացած» տեսակից տարբերւում է իր իսլամացման ժամանակով եւ գործընթացով: Այլապէս՝ ընդհանուր օրինաչափ երեւոյթը եւ արդիւնքը մնում է նոյնը, ինչպէս բնորոշում է դոկտ. Աշոտ Մելքոնեանը. «Ֆիզիկական բնաջնջումից խուսափելու նպատակով հայ բնակչութեան մի հատւածը նախընտրում էր իսլամացումը: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում թուրքանում էր (հայկական աղբիւրներում նշւում է «տաճկացած» բառը), միւսները, առերես ընդունելով մահմեդականութիւնը, շարունակում էին պահպանել ազգային դիմագծի բազմաթիւ կողմեր՝ լեզուն, սովորութիւնները: Շատ դէպքերում էլ նրանք ծածուկ դաւանում էին քրիստոնէական կրօնը»[5]:

Հաւատափոխութեան մեթոդի ազդեցիկութեան չափի եւ յուսալիութեան բնոյթի վերաբերեալ ուշագրաւ մեկնաբանութիւններ է տալիս գերմանական բանակի սպայ Վ. Հոֆֆմանը: Նա, որ հայոց կոտորածների կենդանի վկաներից է համարւում, Գերմանիայի դեսպանութեանը ուղղած իր 1916 թ. օգոստոսի 29-ի նամակում էական հաստատման է յանգում հաւատափոխ հայութեան տեսակի մասին: «Այս ամենից յետոյ,- գրում էր Հոֆֆմանը,- եթէ մահմեդական հայերը ցայժմ իրենց մտածողութեամբ ու զգացողութեամբ մնացել են հայ (եւ մահմեդականներ՝ աւելի վտանգաւոր են լինելու թուրք ժողովրդի համար հէնց իրենց նւազ բացայայտ լինելու պատճառով»[6]: Այստեղ յստակօրէն նկատելի է գերմանացի սպայի կանխատեսումը «նւազ բացայայտ» կամ «թաքուն» հայութեան գոյակերտման շուրջ:

Հիմք ընդունելով մի շարք տեւեալներ, փաստարկներ եւ տեղեկութաբանակ հիմնաւորումներ, կարելի է եզրակացնել, որ այսօր Թուրքիայի տարածքում, յատկապէս պատմական Հայաստանում ապրում են 700,000-ից աւելի «թաքուն» հայեր[7]:

«ՊԱՇՏՕՆԱԿԱՆ» ՀԱՅՈՒԹԻՒՆ

«Պաշտօնական» հայութեան շարունակւող արտահոսքին ակնարկում է նաեւ պոլսահայ գրող Ռ. Հատտէճեանը, իր «Յուշատետրում», 1994 թ., առաւել ծանրանալով արտահոսքին տոն տւող սոցիալ-տնտեսական պատճառների վրայ. «Գաւառի մէջ նրանցից ոմանց համար,- գրում է Հատտէճեանը,- կեանքի պայմանները անտանելի էին, հողագործութիւնը բաւարար չէր, բազմանդամ ընտանիքները բաւականաչափ հող կամ բերք չունէին՝ իրենց ապրուստը ապահովելու համար: Երիտասարդ այրեր, գաւառի մէջ թողնելով իրենց նորապսակ կանանց, Պոլիս էին գալիս՝ զանազան արհեստների մէջ աշխատելու, մինչեւ իսկ բեռնակրութիւն էին անում: Աշխատում էին ու գիշերները կարօտի երգեր էին երգում իրենց կանանց ու ծննդավայրի համար...»[8]:

Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Խաչատուրեան

1951թ. ընտրւեց Գարեգին արք. Խաչատուրեանը, որպէս Թուրքիայի Հայոց Պատրիարք: Նրա ընտրութեամբ, որը զուգադիպում էր Թուրքիայի դեմոկրատական կուսակցութեան իշխանութեան շրջանի վստահաբար ոչ միայն ներկայ իրենց սերունդներով), ապա որպէս այլակերպւած մահմեդականներ՝ աւելի վտանգաւոր են լինելու թուրք ժողովրդի համար հէնց իրենց նւազ բացայայտ լինելու պատճառով»[6]: Այստեղ յստակօրէն նկատելի է գերմանացի սպայի կանխատեսումը «նւազ բացայայտ» կամ «թաքուն» հայութեան գոյակերտման շուրջ:

Հիմք ընդունելով մի շարք տեւեալներ, փաստարկներ եւ տեղեկութաբանակ հիմնաւորումներ, կարելի է եզրակացնել, որ այսօր Թուրքիայի տարածքում, յատկապէս պատմական Հայաստանում ապրում են 700,000-ից աւելի «թաքուն» հայեր[7]:

«ՊԱՇՏՕՆԱԿԱՆ» ՀԱՅՈՒԹԻՒՆ

«Պաշտօնական» հայութեան շարունակւող արտահոսքին ակնարկում է նաեւ պոլսահայ գրող Ռ. Հատտէճեանը, իր «Յուշատետրում», 1994 թ., առաւել ծանրանալով արտահոսքին տոն տւող սոցիալ-տնտեսական պատճառների վրայ. «Գաւառի մէջ նրանցից ոմանց համար,- գրում է Հատտէճեանը,- կեանքի պայմանները անտանելի էին, հողագործութիւնը բաւարար չէր, բազմանդամ ընտանիքները բաւականաչափ հող կամ բերք չունէին՝ իրենց ապրուստը ապահովելու համար: Երիտասարդ այրեր, գաւառի մէջ թողնելով իրենց նորապսակ կանանց, Պոլիս էին գալիս՝ զանազան արհեստների մէջ աշխատելու, մինչեւ իսկ բեռնակրութիւն էին անում: Աշխատում էին ու գիշերները կարօտի երգեր էին երգում իրենց կանանց ու ծննդավայրի համար...»[8]:

1951թ. ընտրւեց Գարեգին արք. Խաչատուրեանը, որպէս Թուրքիայի Հայոց Պատրիարք: Նրա ընտրութեամբ, որը զուգադիպում էր Թուրքիայի դեմոկրատական կուսակցութեան իշխանութեան շրջանի հետ, աշխուժութեան լիցք հաղորդւեց Թուրքիայի հայութեան ազգային-հասարակական կեանքին: «Պոլսոյ պատրիարքարանը,- գրում է «Հայրենիք» ամսագիրը,- խոհեմ քայլերով ջանում է օգտւել Դեմոկրատ կառավարութեան միջոցով տրւած մի շարք թեթեւ «շնորհ»-ներից, ինչպէս տեղ-տեղ սակաւաթիւ հայկական եկեղեցիների վերադարձը եւ կրօնական պաշտամունքի ազատութիւնը: Դեռ շատ թոյլ այս քայլերը պիտի ծառայեն մեր բեկորներին, որոնք իրենց ազգային գոյութիւնը պահպանելուց բացի, այլ ձգտում չունեն»[9]:

Այդ թեթեւ «շնորհ»-ների առաջին արդիւնքներից կարելի է համարել Հաթայի երկու եկեղեցիների բացումը՝ 1950թ. սկզբում[10]: Այս նոյն ուղղութեամբ հետաքրքրական տեղեկութեան ենք հանդիպում Բէյրութի «Մասիս» շաբաթաթերթում, ուր ասւում է, որ Ամերիկայի սեբաստացիների հայրենակցական միութիւնը 1952 թ. յատուկ մի պատւիրակ է ուղարկել Սեբաստիա՝ այնտեղի եկեղեցին վերանորոգելու եւ հնարաւորութեան դէպքում այնտեղ դպրոց բացելու նպատակով[11]: Պատւիրակը «արտօնութիւն ստացած է թէ՛ եկեղեցին կառուցանելու, եւ թէ՛ դպրոց բանալու,- գրում է «Մասիս» շաբաթաթերթը,- Տէրտէր մը պահելու իրաւունքն ալ ստացած է: Տեղական իշխանութիւնները ֆրանսական քուլեջը տրամադրած են սեբաստացի հայուն...»[12]:

Կեսարիայի հայկական վարժարանի բացման համար եւս լաւատես է եղել Տէր Հայկազունը եւ յստակօրէն հաւաստիքներ է տւել, որ վարժարանը իր աշխատանքը պաշտօնապէս սկսելու է 1952 թ. աշնանը[13]:

Մեզ դեռ յայտնի չեն թ՛ւ Սեբաստիայի, թ՛ւ Կեսարիայի հայկական վարժարանների չբացման հարցին կապւած մանրամասնութիւնները, սակայն կռահելի է, որ Թուրքիայի դեմոկրատական կոչւած իշխանութիւններն չէին ուզում արտօնել «Անատոլիայի» խորքում հայկական վարժարանների վերաբացումը: Այնուամենայնիւ, ի տարբերութիւն Աթաթուրքի եւ Ինոնիւի բռնատիրութեան, «դեմոկրատական»-ները այս ժամանակահատւածում ընթացք էին տալիս սահմանափակ թւով եկեղեցիների վերաբացմանն ու օծմանը, գերեզմանոցների եւ միւս վագֆների իրաւական հարցերի բարենպաստ կարգաւորմանը, եւ, իհարկէ, միմիայն խօսքերի սահմաններում արտօնում էին դպրոցների վերաբացումը:

Պիտի ասել, որ համեմատական ազատ ու խաղաղ տւեալ պայմանների արգասիքները երեւան էին գալիս ամենատարբեր վկայութիւններում: Այսպէս, օրինակ, Էրէյլիում, 1951թ., Կ. Պոլսից ուղարկւած քահանան կատարել է օրհնութեան արարողութիւն, պսակել վեց զոյգերի եւ մկրտել 45 մանուկ[14]: Կամ օրինակ՝ «Նոր Մարմարայի» հաղորդած լրագրութիւնում նշւում է Էւերեկում եւ Ֆենեսէում (Կեսարիայի մօտակայքում) Ծաղկազարդ, Աւագ հինգշաբթի եւ Ս. Ջատիկ տօների առթիւ կատարւած առանձին արարողութիւնների եւ եկեղեցու «խուռն բազմութեամբ» լցւած լինելու մասին[15]: Ջառայում էլ նոյնպէս առաքւած քահանայի ձեռամբ, 1951 թ. պսակւել են հինգ զոյգեր եւ մկրտւել 30 մանուկ[16] եւ այլն:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մամլոյ լրատուութիւնից պարզւում է նաեւ, որ կանոնաւոր եւ ակտիւ թղթակցական կապ է գոյութիւն ունեցել գաւառների եւ Կ. Պոլսի հայկական մամուլի, յատկապէս «Նոր Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթերի հետ, ինչը ընդգծելի է եւ նկատառման արժանի: Լրագրութիւնների կազմութեան անմիջականութիւնից կարելի է դառնում եզրակացնել նաեւ, որ Պոլսի հայկական թերթերի թղթակիցների մի մասն էլ գաւառներում բնակւած տեղացիներ են եղել:

Համեմատական ազատ ու խաղաղ այս պայմաններում, թեթեւ անդորրի պահերն օգտագործելով, հայ բեկորները նւիրւում էին մշակութային ստեղծարար աշխատանքի: «Ձումհուրիէթ» օրաթերթի աշխատակից, անւանի մտաւորական-լրագրող Եաշար Քեմալը գրում էր. «Մի շատ քաղցր բան ասեմ ձեզ. Անատոլիայի ժողովրդական բանաստեղծներից շատերը հայ են: Այս իմացայ, երբ աշխատանք էի կատարում ֆոլկլորի վրայ... »[17]:

Եաշար Քեմալի հաստատման ուղղութեամբ մենք եւս հանդիպեցինք հետաքրքիր տեղեկութիւնների՝ թուրքական «venk.info» կայքէջում, ուր «անատոլեան» եւ արեւելեան տասնեակ ֆոլկլորիկ երգերի շարքում, նշւել են տասից աւելի հայկական տոհմիկ երգերի անուններն ու հայերէն բովանդակութիւնը՝ թուրքերէնով: Այսպէս՝ «Այ Նարէն» ու «Հայ Նիրհրնան» այդտեղ ներկայացւել են որպէս Սասունի, «Պուրմա տիկինն եկել էր»՝ Բալուի, «Դելէ Եամանը»՝ Վանի, «Հլը, հլէ, հլէ Նինոյին»՝ Վագըֆ գիւղի, «Սարի գեալինը»՝ Էրզրումի եւ «Հալայի պարը»՝ Այնթապի հայկական ֆոլկլորներ[18]:

Պիտի նշել, որ վերոյիշեալ ֆոլկլորները վերարծարծելու ուղղութեամբ հետաքրքրական հակումներ է նկատւում այսօր Թուրքիայում: Այս իմաստով, առանց վերջնական մեկնաբանութիւնների, կարելի է, օրինակ, կանգ առնել «Գարդեշ թուրքուլեր» (եղբայր թուրքեր) նւագախումբ-երգչախմբի վրայ: «Անատոլիայում» ապրող ժողովուրդների ֆոլկլոր երաժշտական կտորներ կատարող այս խումբը հիմնւել է 1993թ. «Բողազիջի» համալսարանի մի խումբ ուսանողների միջոցով[19]: Նրանք ցայժմ կատարել են երգեր քրդերէնով, լազերէնով, ադրբեջաներէնով եւ այլն: Յատկանշական կարելի է համարել հայերէնով կատարումներից «Բինգէոլը», «Սարի Գելինը», «Գորանի-Դելէ Եամանը», «Զեփիւռ կը դառնամը», եւ «Հայ Նիրհրնան»[20]...

Եաշար Քեմալ

2000թ. Թուրքիայի հայոց պատրիարքի՝ Ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆեանի եւ կրօնի նախկին տեսուչ Լիւթֆի Դողանի շուրջ մէկժամանոց հեռուստազրոյցում եւս որոշակիօրէն ակնարկւում է գաւառների հայկական համայնքներին եւ բացատրւում է դրանց համայնքային դժւարութիւնների ու քաղաքացիական բարդութիւնների հարցը: «Այսօր Ստամբուլում ու բովանդակ Թուրքիայում գործող 44 եկեղեցիներ ունենք,- ասում է Մեսրոպ արք. Մութաֆեանը,- սրանից բացի կան 14 համայնքներ եւս, որոնք իրենց ապրած տեղում եկեղեցի չունեն, ինչպէս Անկարա, Մալաթիա, Սվազ: Այս կարիքների դիմաց ունենք միայն 25 եկեղեցականներ, որը շատ քիչ է...»[21]:

Ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆեանի և կրոնի նախկին տեսուչ Լիւթֆիւ Դողանի հեռուստազրոյցը:

Թւում է, թէ մշակութային կեանքը կիլիկեան համայնքներում ընթանում է քիչ թէ շատ բնականոն եւ մինչեւ իսկ անկաշկանդ: Վագըֆ գիւղի նորաշէն եկեղեցու պարտէզում Արամ Խաչատրեանի 100 ամեակին նւիրւած հանդիսութեան կապակցութեամբ 2003 թ. լրագրութեան մէջ ասւում է. «Եկեղեցին եւ բակը ծայրից ծայր լեցուն էր գիւղացի հաւատացեալներով. ներկայ էին բազմաթիւ ուխտաւորներ՝ Մէրսինից, Ադանայից, Իսքենդերունից, Անտիոքից, Սամանդաղից»[22]:

«Պաշտօնական» հայութեան ցրւածութեան այսօրւայ պատկերը որոշակիացնելու մտադրութեամբ օգտագործւել է համացանցային մի նոր հնարաւորութիւն, որի գիտական արժէքը մեթոդոլոգիական դիտանկիւնից քննարկման եւ ուսումնասիրութեան է կարօտ: Մինչ այդ, սակայն, կիրառելով ICQ կոչւող, «թղթատար» (messenger) համացանցային տեսակի ընտանիքին պատկանող ծրագիրը՝ կարելի է ուշագրաւ արդիւնքների յանգել: Ի տարբերութիւն միւս ծրագրերի՝ ICQ-ի «Հանրային որոնում» (People search) բաժինը տալիս է մի բացառիկ կարելիութիւն, որն է. հասցէներ որոնել ինչպէս բնակած երկրի եւ քաղաքի, այնպէս էլ լեզւական նախասիրութեան հիման վրայ: Այսպիսով՝ կարելի է դառնում գտնել, օրինակ, Թուրքիայի Արդւին մարզում բնակւող այն անձերի համացանցային հասցէները, ովքեր իրենց լեզւական նախընտրութիւնների եռեակ ցանկում նշել են նաեւ հայերէնը: Այս նոր մեթոդով 2005 թ. փետր. որոնումներից ստացւում է հայերէն լեզւին ծանօթ մարդկանց համացանցային հասցէների քանակը: Սոյն տւեալները կարելի է ամփոփել քարտէզում:

Տւեալներից ու քարտէզից եզրակացւում է, որ Տրապիզոնում, Էրզրումում եւ Ռիզէում հայախօսների կամ առնւազն հայերէն իմանալու յաւակնութիւն ունեցողների մեծ թւաքանակով հասցէներ կան: Մալաթիայի, ինչպէս նաեւ Կիլիկիայի եւ Փոքր Հայքի եւ յարակից շրջանների արեւելեան եւ արեւմտեան բաժինների պարագայում եւս այդպիսի իրավիճակ գոյութիւն ունի:

Հոգեմտաւոր ստեղծագործութեան համատեքստում կարելի է նշմարել «պաշտօնական» հայ մի շարք գրողներ, որոնք իրենց գիւղագրական վէպերում, վիպակներում ու պատմւածքներում, կենդանի պատկերներ տալով գաւառահայ կեանքից, ճոխացնում են մեր պատմագիտական տեղեկութիւնները:

Այս իմաստով կարելի է մէջբերել Մկրտիչ Մարկոսեանի երկերից: Նա ծնւել է Տիգրանակերտում 1938թ.[23]: Իր գիւղագրական երկերում՝ «Մեր այդ կողմերը» (1988, 1994, 1995 եւ 2001) եւ «Տիգրիսի ափերէն» (1999), Մկրտիչ Մարկոսեանը պատկերաւոր կերպով նկարագրում է Տիգրանակերտի հայութեան հասարակական կեանքը՝ 1940-ականներին. եկեղեցական արարողութիւններ, հարսանեաց հանդէսներ եւ այլն: Նա շեշտում է, որ այնտեղ աստիճանաբար դժւարացել են պարզ գոյապրուստի կենցաղային պայմանները. «Հայերը միայն արհեստաւոր էին,- վկայում է նա,- որովհետեւ անելու այլ գործ չէր մնացել: Նախ իրենց հողամասերը կորցրել էին, ապա պաշտօնեայ կամ զինւորական դառնալ էլ չէին կարող...»[24]: Մկրտիչ Մարկոսեանը իր «Մեր այդ կողմերը» գիւղագրական երկում գրում է. «Տէր Արսէնը Տիգրանակերտի միակ հայ քահանան էր հայոց: Ուրիշ մը չկար: Դերիկի, Լիչէի, Էլազիգի, Մալաթիայի ա՛լ քահանան էր: Տարին մէկ երկու անգամ այդ կողմերն ալ կերթար, հաւաքաբար մկրտութիւն կամ պսակ կը կնքէր կու գար»[25]: Լրացման կարգով ասենք, որ նրա «Մեր այդ կողմերը», «Գեաւուր մահալեսի» թուրքերէն թարգմանութեամբ արժանացել է ֆրանսահայ գրողների ընկերակցութեան գրական մրցանակի:

Գեղամ Սեւանը (1926-91 թթ.), իր «Հայոց թաղը» (Երեւան, 1967) եւ «Երեք սերունդ» (Երեւան, 1974) երկերում նոյնպէս կենդանի տեղեկութիւններ է տալիս 1940-ականների աւարտին, իր զինւորական ծառայութեան ժամանակ հանդիպած, գաւառահայութեան հասարակական կեանքի վերաբերեալ:



Մկրտիչ Մարկոսեան

1933թ. Թոքատում ծնւած Յակոբ Արսլանեանի «Դարաւոր այս ծառին արմատներ թող դալար մնան» պատմւածքում («Նոր Մարմարա», 1992), ակնարկներ են գնում Սեբաստիայի հայութեան 1950-ականների կեանքի, յոյզերի ու մաքառումների մասին[26]: Սեբաստիայի մարզում գտնւող Կեմերեկ գիւղի մասին իր 1950-ականների յուշերը գրելով՝ հետաքրքրական մի իրողութեան է ակնարկում Յակոբ Արսլանեանը. «Երբ «վարպետ» (ուսթա) ըսւի, անպայման հայ կը հասկցւի,- գրում է նա,- որովհետեւ Անատոլուի գիւղերուն մէջ հայերն են, որ կը զբաղին արհեստներով եւ վարպետ կը յորջորջւին»[27]:

Այստեղ կարելի է յիշել նաեւ 1938թ. Վագըֆ գիւղում ծնւած Արսէն Ճանեանին, որի հայրենակարօտ քերթւածներում, գեղարւեստական հարուստ ու սահուն ոճով, տեւական ներկայութիւն է գաւառը[28]:

Յակոբ Արսլանեան

Նորայր Տատրեանի «Մատաւաս գիւղը» պատմւածքում («Նոր սան», 1991) հետաքրքրական մանրամասնութեամբ են նկարագրւել Բիթլիսի մօտակայքում գտնւող եւ մի քանի տարի առաջ հայութիւնից պարպւած Մատաւաս գիւղի բնակարանները, ամայացած դաշտերն ու փողոցները[29]: Այս շարանին կարելի է դեռ աւելացնել այլ անուններ եւ երկեր, որոնց ամբողջութիւնը այսօր հանդիսանում է որպէս «պաշտօնական» հայութեան հոգեմտաւոր հարստութիւն:

«ԻՍԼԱՄԱՑԱԾ» ՀԱՅՈՒԹԻՒՆ

Սանդրինէ Ալեքսին իր «The Kizil Bash» աշխատութեան մէջ (2000 թ.), վերլուծելով քրդական կարեւոր ցեղախմբերի ծագումն ու պատմական հոլովոյթը, նշում է, որ «Որոշ քուրդ-զազաները պնդում են, որ իրենք հայերի ուղղակի շառաւիղներն են: Ամէն դէպքում պատահել է մշակութային եւ հասարակական կարեւոր համաձուլում՝ քրիստոնեաների եւ Դերսիմի կիզիլբաշների միջեւ: Նրանք Զատիկը տօնում են հայերի հետ եւ Սուրբ Սարգսի ծէսը, փոխաբերական իմաստով, կատարում են Խըզըր-Էլիասի (Khizr-Elias) անւամբ»[30]:

Արսեն Ճանեան

Այնուամենայնիւ, զազաների եւ ալեւիների նիւթը առայժմս հանելով մեր ուսումնասիրութեան հետազօտական շրջագծից՝ կը փորձենք, ընդհանուր գծերով, անդրադառնալ Ցեղասպանութիւնից դեռ շատ առաջ իսլամացած համշենահայ-պոնտահայերի ներկայ իրավիճակին:

Լեւոն Խաչիկեանը իր «Էջեր համշինահայ պատմութիւնից» արժեքաւոր աշխատաթեան մէջ նշում է, որ ֆրանսացի մարդաբան եւ հայագէտ Ժորժ Դումեզիլը 1962թ. գրանցել էր Համշէնի բարբառով երեք պատմւածքներ եւ ուսումնասիրել այդ բարբառը՝ հարցուփորձ անելով Իսմէթ Ակբիյիկ անունով համշէնցի մի ուսանողի:

Նորայր Տատրեան

Այդ պատմւածքները «խօսուն փաստեր են այն իրողութեան,- գրում է Լեւոն Խաչիկեանը,- որ այսօր իսկ կենսունակ է համշէնահայ բարբառը շուրջ երկու դար առաջ հաւատափոխ եղած համշէնցիների նոր սերնդի շրթերին»[31]:

Հայկական ինքնատիպ այս տոհմն ունի հայերէնի իւրայատուկ բարբառ եւ բնակւում է սեւծովեան ափերիզից սկսւող եւ մինչեւ էրզրում երկարող տարածքներում:

Հարւարդի եւ Կոլումբիայի համալսարանների լեզւաբանական շրջանակներում համբաւ ունեցող Բերտ Վաուքսն իր մասնագիտական յօդւածի նախաբանում, ակնարկելով այն հարցին, որ լազերի եւ աբխազների մասին յաճախ են քննարկումներ

Ժորժ Դումեզիլ

գնում, ասում է սակայն. «Քչերը գիտեն լայն ցրւածութեամբ տոհմական այն խմբի մասին, որ այսօր հաշւում է մի քանի հարիւր հազարներով: Այս խումբը, որ ինքն իրեն «համշէնցիք» կամ «համշէն» է անւանում, զբաղեցնում է սեւծովեան ափը՝ Թուրքիայի հիւսիս-կենտրոնից, Սամսունից մինչեւ հարաւային Ռուսաստան...»[32]:

Նա համշէնահայութեանը հիմնականում բաժանում է երեք խմբերի[33].

ա) արեւմտեան համշէնահայութիւն. Սամսունում (Զանիկում), Օրդուում, Կիրեսունում, Տրապիզոնում եւ Ռիզէում ցրւած, թուրքախօս եւ սունի դաւանանքին յարած,

բ) արեւելեան համշէնահայութիւն. առաւելաբար Արդւինում բնակւող, համշէնահայ բարբառով խօսող եւ սունի դաւանանքին յարած,

գ) հիւսիսային համշէնահայութիւն. Վրաստանում եւ Ռուսաստանում բնակւող, համշէնահայ բարբառով խօսող եւ քրիստոնեայ:

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշէնցիների կամ հեմշինլիների համար նման մի տեսակաւորում է նկատի առնում՝ արեւմտեան խմբին կոչելով «Բաշ-հեմշինցիներ», իսկ արեւելեան խմբին՝ «Հոփա-հեմշինցիներ»: Նշեալ հանրագիտարանը հաստատագրում է համշէնցիների հայկական ծագումը, բայց եւ ուրւագծում ինչպէս լեզւական, այնպէս էլ նրանց ծէսերի հետ կապւող որոշ տարբերութիւններ. այսպէս՝ եթէ «թուլումը» (մի տեսակ պարկապզուկ) համարւում է աւանդական նւագարան՝ արեւմտեան խմբի մօտ, ապա «շեմշիր քաւալը» (մի տեսակ սրինգ) նոյն տեղն ունի արեւելեան խմբի մօտ եւ այլն[34]:

Տ. Մեսրոպ քհնյ. Ռաթէոսեանը եւ Արմինէ Բուդաղեանը 2004 թ. ամռանը Իրանից դէպի Վան ուխտագնացութեան մասին իրենց առանձին ուղեգրութիւններում պատմում են Աղթամար կղզում Ս. Խաչ եկեղեցու մօտ իրանահայ ուխտագնացների մի խումբ համշէնահայերի հետ հանդիպման մասին: «Տրապիզոն քաղաքից էին,- գրում է Տ. Մեսրոպ քհնյ. Ռաթէոսեանը,- եւ թուրքախօս հայեր են, իհարկէ նրանցից ոմանք նաեւ հայերէն էին խո-

սում»[35]: «Այդ ընթացքում,- գրում է Արմինէ Բուդաղեանը,- մեր շուրջպարին միացան նաեւ տեղացի մի քանի կանայք: Երբ պարը դադարեց, իրար հետ խօսեցինք եւ պարզուեց, որ իրենց տատիկները եւ պապիկները նոյնպէս այս երգերը գիտէին եւ երգում էին»[36]:

Դարերից ի վեր իսլամին յարած լինելով եւ պետականօրէն որպէս էթնիկական փոքրամասնութիւն չճանաչուելով հանդերձ՝ համշէնահայութեան «անատոլական» հատուածը յամառօրէն պահպանում է իր քրիստոնէական բարքերի եւ աւանդութիւնների մի մասը (Ծաղկազարդ, Վարդավառ եւ այլն): Օրինակ՝ Վարդավառը, որին համշէնահայերը անւանում են «Վարդիվոր», ամէն տարի մեծ շուքով ու ծիսակատարութեամբ տօնւում է առ այսօր[37]:

Հայկազուն Ալլրցեանը, «Երկիր» թերթի հետ իր ասուլիսում, հաստատում է որ համշէնահայերը գտնւելով թուրքական մշակոյթի ազդեցութեան տակ, բայց հիմնականում պահպանել են ազգային ծէսերը, սովորոյթները, երգն ու երաժշտութիւնը, պարերը, կենցաղավարութեան շատ հւրայատկութիւններ: «1994 թ. մի տրապիզոնցի համշէնահայ (մահմեդական),- ասում է Հայկազուն Ալլրցեանը,- ինձ պատմեց, որ իր տատը, սովորութեան ուժով, հունցած խմորի վրայ միշտ խաչի նշան է հանում»[38]:

Հետաքրքրական մանրամասնութեան ենք հանդիպում Յովան Սիմոնեանի ուսումնասիրութիւնում, այն է՝ եւ արեւմտեան, եւ արեւելեան համշէնահայերը պահպանել են նշւած բարքերը եւ աւանդութիւնները, սակայն համշէնահայերէն բարբառը պահպանւել է միայն արեւելեան համշէնահայերի մօտ: Սիմոնեանի համոզմամբ՝ սա եղել է երկու խմբերի միջեւ խզւածութեան արդիւնք[39]:

Համշէնահայութեան բնակավայրերում ապրում են էթնիկական զանազան խմբեր՝ յոյներ, լազեր, վրացիներ, թուրքեր եւ այլն: «Մահմեդական համշէնցիները,- գրում է Լեւոն Խաչիկեանը,- ըստ հնարաւորի պահպանել են ընտանեկան իրենց կենցաղն ու բնաւորութիւնը. ականատեսների վկայութեամբ նրանք դրականօրէն տարբերւում են իրենց հարեւանութեամբ ապրող մահմեդական յոյներից, լազերից ու վրացիներից. քաջարի են, վեհանձն, անխարդախ ու պարզասիրտ, չեն խնամիանում ուրիշների հետ եւ հարեւաններից տարանջատւում են իրենց հեմշին անւանումով, որ մատնանշում է ոչ այնքան իրենց հայրենի երկրամասը՝ որքան հայկական ծագումը»[40]:

Թէեւ կրօնական այլասերումը մնում է անցանկալի իրականութիւն համշէնահայերի մօտ, սակայն որոշ տւեալներից ապացուցւում է, որ իսլամի նկատմամբ նրանց տածած հաւատքը հեռու է սուննիականութեանն յատուկ ֆանատիկականութիւնից: «Համշէնները շատ կրօնական չեն,- պարզաբանում է Յովան Սիմոնեանը՝ իր դասախօսական ելոյթներից մէկում,- Նրանք շատ քիչ մզկիթներ ունեն եւ շատ քիչ մարդիկ են ուշադրութիւն դարձնում դրանց: Համշէնցիները նաեւ օգտագործում են ալկոհոլիկ խմիչքներ»[41]:

Կրօնական ոչ-ֆանատիկութեան իրողութիւնը լաւագոյնս պարզւում է նաեւ համշէնցիների սեռական խառը կազմով շուրջպարերի բազմաթիւ լուսանկարներից, ուր աղջիկներ եւ տղաներ, մէկը նդմէջ, միմիանց ձեռքերն են բռնում պարելիս: Նման երեւոյթների պատկերացնելն անգամ դժւար է՝ կրօնամոլ սուննիների դէպքում:

Մեր տրամադրութեան տակ են նաեւ յայտնի կամ անյայտ երգիչների կատարմամբ երաժշտական կտորներ՝ համշէնական երգերից (թուլում, քեամանչա, աթաբարի, մնի-մնի կամ մանի-մանի եւ այլն), որոնց մեծամասնութեան մէջ, հայերէն բառերով ու համշէնահայ բարբառով արտացոլւում են «իսլամացած» հայութեան հոգեմտաւոր ստեղծագործութիւնը[42]:

Այժմ ակնարկենք երիտասարդ ռեժիսոր Օզջան Ալպերի «Momi» (մեծմայր) կարճ կինոժապաւէնին, որը էկրանաւորւել է 2000թ.[43]: Սոյն կինոժապաւէնում ճոխ կադրերով նկարահանւել են Համշէնի Քաջքար լեռան գեղեցիկ բնութիւնից տեսարաններ, Արդւին-Շաւշատի ճանապարհի եւ 3000 մետր բարձրութեան վրայ գտնւող Սուսուզյուրտ գիւղակի գիւղացիների համշէնահայ բարբառով դիալոգներ ու երգեր, ընդորում հայերէն դիպուկ բառերով հնչում են նախադասութիւններ, համրանք եւ այլն:

Իսլամացած համշէնահայութեան հոգեմտաւոր աշխարհի համատեքստում չի կարելի անտեսել երիտասարդ արւեստագէտ-գեղանկարիչ, գերմանաբնակ Դենիզ Ալթին (Ծովակ Կոստանեան): Նա զաւակն է բուն բաշ-համշէնցի, «Գեօթէ» համալսարանի գիտաշխատող, նախկին վարչապետ Մեսուդ Ելմազի ազգականուհի, Ալիէ Ալթի (Ալիս Կոստանեան)[44]: Դենիզ Ալթը ցայժմ ունեցել է նկարչական մի քանի ցուցահանդէսներ: Հայոց Ցեղասպանութեան նւիրւած նրա ցուցահանդէսից, ցաւօք չունենք եւ ոչ մէկ նմոյշ: «Ձայն համշենականի» 2004թ. NN4-5-ից և «Դիտակ» հանդէսից գիտենք այդ մասին, որ. «ցուցդրւող նկարները վառ հայկական գոյներով են եւ Ցեղասպանութեան տառապանքներու պատկերմամբ»[45]:

(Շարունակելի)

1. Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:
2. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005թթ.), Երեւան, 2005թ. էջ 104:
3. Մելքոնեան Ա., Հայ բնակչութեան էթնոկրօնական դիմախեղման գործընթացներն Արեւմտեան Հայաստանում XVI-XVIII դարաշրջանում, գիտաժողովի հիմնադրոյթներ, Երեւան, 2004, էջ 44:
4. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Երեւան, 2005 էջ 104:
5. Մելքոնեան Ա., նոյն տեղում:
6. http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/0/CF7A3142040147C3C1256AD70079AFBC OpenDocument, http://www.armenocide.de/ armenocide/armgende.nsf/WebStart_EnOpenFrameset OpenDocument, http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart_EnOpenFrameset
7. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005թթ.), Երեւան, 2005 էջ 104:
8. Ալիք, 1994, նոյեմբերի 2:
9. «Հայրենիք» ամսագիր, 1952, հոկտ., էջ 111:
10. Ալիք, 1951, յունւարի 25:
11. Ալիք, 1952, օգոստոսի 14:
12. Նոյն տեղում:
13. Ալիք, 1952, սեպտեմբերի 11:
14. Ալիք, 1951, փետրւարի 1:
15. Ալիք, 1951, ապրիլի 23:
16. Ալիք, 1951, օգոստոսի 13:
17. Նոր Մարմարա, 1960, սեպտեմբերի 11:
18. http://www.venk.info/default.asp.
19. http://www.kardesturkuler.com/eng/-gruphakkinda.htm:
20. http://www.kardesturkuler.com/eng/albumler:
21. Նոր Մարմարա, 2000, փետրւարի 5:
22. Նոր Մարմարա, 2003, սեպտեմբերի 30:
23. Տէմիրճեան Ս. Ճ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատ. Ա, Միչիգան, 1994, էջ 513:
24. Նոր Մարմարա, 2001, նոյեմբերի 21:
25. Տեմիրճեան Ս. Ճ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատոր Ա, Միչիգան, 1994, էջ 398:
26. Նոյն տեղում, էջ 424-426:
27. Նոյն տեղում, էջ 425:
28. Նոյն տեղում, էջ 509:
29. Նոյն տեղում, էջ 434-436:
30. http://perso.wanadoo.fr/kurdistannameh/histoire/kizil/hist2_kizil_kurd.htm.
31. Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 139:
32. Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, 1996, April 2, p. 1.
33. Նոյն տեղում:
34. http://en.wikipedia.org/wiki/Hamshenis
35. Ալիք, 2004, սեպտեմբերի 27:
36. Ալիք, 2004, սեպտեմբերի 27:
37. http://www.tbyayin.gov.tr/tarimkoy/sayi127/m04.htm.
38. Ալիք, 2004, հոկտեմբերի 14:
39. Simonian H.H., History and Identity among the Hemshin, ISIM Newsletter 14, June 2004, pp 24,25
40. Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 139:
41 http://www.lazebura.net/english - Lazebura.net
42. Խտասկաւառակներով (CD) պահւած հեղինակի մօտ:
43. http://birkanmakar.dostweb.com/contact.html.
44. Դիտակ, Բէյրութ, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:
45. Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

«Ձայն համշենականի» ընթերցողներն, անշուշտ, հիշում են, որ 2005 թ. հոկտեմբերի 13-15-ը ՌԴ Կրասնոդարի երկրամասի Ադլեր քաղաքում (Մեծ Սոչի) տեղի ունեցավ «Համշենը և համշենահայերը» թեմայով գիտաժողով, որը կազմակերպել էին Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտը, ՀՅԴ Եվրոպայի և Մոսկվայի Հայ դատի գրասենյակները՝ Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի «Համշեն» հայկական գիտական-լրատվական-մշակութային կենտրոնի և Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի աջակցությամբ: Գիտաժողովին ներկա էին գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Իրանից և ԱՄՆ-ից: Ցավոք, որոշ գիտնականներ թեև ուղարկել էին իրենց զեկուցումները, բայց տարբեր պատճառներով չէին կարողացել ժամանել Ադլեր: Որոշվեց, որ անկախ նրանց մասնակցել-չմասնակցելուց, բոլորի զեկուցումները հրատարակվեն հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն ժողովածուներում: Եվ ահա, օրերս Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտը լույս ընծայեց «Համշենը և համշենցի հայերը (գիտաժողովի հոդվածներ)» գիրքը թուրքերենով, որում թարգմանաբար ներկայացված են Բաբկեն Հարությունյանի «Համշենցի հայերի պատմությունից», Աշոտ Մելքոնյանի «Համշեն. պատմաաշխարհագրական ակնարկ. 16-20-րդ դարեր», Ռիչարդ Հովհաննիսյանի «Համշենցիները, Պոնտոսը և Հայաստանը (1914-21թթ.)», Պետրոս Հովհաննիսյանի «Պոնտոսի հայության գողգոթան», Լևոն Կարապետյանի «Կուբանի դաշնակցական կուսակցության պատմությունից (1904-1918թթ.)», Ալեքսանդր Սկակովի «Աբխազահայերը անցյալում և ներկայում», Արտավազդ Թուլումջյանի «Խոփա-համշենցիներ և բաշ-համշենցիներ», Կարեն Խանլարիի «Հայ էթնոկրոնական տարրը «Անատոլիայում» 1991-2005թթ.», Կարինե Գրիգորյանի «Ինքնության սահմանները. սոցիոմշակութային սահմանակցումը որպես էթնիկական ինքնագիտակցության ձևավորման գործոն», Նոնա Շահնազարյանի «Լողացող ինքնություն. հեմշիլների (հեմշիններ) օրինակը», Ալիյե Ալթի (Ալիս Կիրակոսյան) «Համշենցի հայեր. մի համշենցի հայ կնոջ տեսակետն այսօր», Միխայիլ Կուզուբի «Համշենցի հայերի հեքիաթային բանահյուսության դիվաբանական պատկերացումները», Իգոր Կուզնեցովի «Համշենահայերի և հեմշիլների մշակույթում պահպանված պոնտական ժառանգությունը (հմայությունն ընդդեմ երաշտի)», Ժենյա Խաչատրյանի «Համշենական պարերը և նրանց առանձնահատկությունները (19-րդ դարի երկրորդ կես-20-րդ դար)», Ժենյա Խաչատրյանի և Էմմա Պետրոսյանի «Համշենի տոներն ու խաղերը (19-րդ դարի վերջ-20-րդ դար)», Ալլա Տեր-Սարգսյանցի «Համշենահայերի էթնոմշակութային ավանդույթները 20-րդ դարի 80-90-ական թթ.», Դանիել Կուկույանի «Համշենյան պարադոքսներ» և Սերգեյ Վարդանյանի «Մահմեդական համշենահայերի մասին 1776 թ. մի կարևոր վկայություն»:

Համշենահայերի պատմությանն ու մշակույթին, ազգագրությանը նվիրված այս ժողովածուի թուրքերեն հրատարակումն, անշուշտ, կարևորագույն իրագործում է, որը հուսով ենք, կարժևորեն մեր գիտնականներն ու մամուլը: Մեր թերթը ևս առաջիկայում ավելի մանրամասն կանդրադառնա այս թուրքերեն ժողովածուին, որը, վստահ ենք, կօգնի կրոնափոխ շատ համշենցիների վերագտնելու իրենց արմատները, ճանաչելու սեփական պատմությունը և կտա նրանց հուզող բազմաթիվ հարցերի պատասխաններ: Խորին շնորհակալություն հայտնելով այս գրքի հեղինակներին, թարգմանիչներին, բոլոր-բոլորին, ովքեր նյութապես ու բարոյապես աջակցել են նրա լույս ընծայմանը, ցանկանում ենք մեկ հատված տպագրել գրքի առաջաբանից, որի հեղինակը բանասիրական գիտությունների թեկնածու ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎԱՐՑԱՆՆ է, որի բոլորանվեր ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ այս գրքի հրատարակումը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԹՎԻ ՄԱՍԻՆ:

Այս հարցի վերաբերյալ հետազոտողների կողմից հայտնվել են տարբեր կարծիքներ, որոնցից ոչ մեկն էլ, բնականաբար, չէր կարող հենված լինել քիչ թե շատ հստակ հաշվարկների վրա: Խնդիրը բարդանում է նաև այն պատճառով, որ համշենահայերը տարբեր խմբերի են բաժանվում ոչ միայն ըստ բնակության վայրերի, այլև, ըստ դավանանքի ու լեզվի, որն էլ, հատկապես Թուրքիայի պարագայում, լուրջ դժվարություններ է առաջացնում: Հարցի հետազոտողներն էլ հիմնականում անդրադարձել են լեզվի, բանահյուսության, դավանափոխության որոշ խնդիրների, քանի որ թուրքական իշխանություններին հաճո չի եղել հարցի արծարծումը:

Տարբեր հետազոտողներ նշում են տարբեր թվեր՝ մի քանի տասնյակ հազարից մինչև 1,5-2 միլիոն և նույնիսկ ավելի: 25-40 հազար թիվն ընդունողները հավանաբար նկատի ունեն միայն Խոփայի շրջանի հայախոս համշենահայերին: Հավաստի են թվում Ալիե Ալթի տվյալները. նրա հաշվարկներով Թուրքիայում բնակվում է ավելի քան մեկ միլիոն իսլամացած համշենահայ: Հեմշիլներ բնակվում են նաև Միջին Ասիայում և Ռուսաստանում: Սրանց ընդհանուր թիվը մոտ է 5 հազարի: Գրեթե բոլորն էլ տիրապետում են մայրենի բարբառին:

Աբխազիայում բնակվող համշենահայերի թիվը 1992-93 թթ. վրաց-աբխազական պատերազմից հետո նվազեց մոտ 25 հազարով՝ իջնելով 65-70 հազարի: Արտագաղթածները հաստատվեցին Ռուսաստանում:

Բավականին դժվար է որոշ եզրակացություն անելը ռուսաստանաբնակ համշենահայերի թվի մասին. այն տարբեր հաշվարկներով տատանվում է 300-ից 400 հազարի միջև: Առավել հավանական է թվում 300 հազարը:

Հայաստանում չճշտված տվյալներով ապրում է 4-5000 համշենահայ:

Այս տվյալներով համշենահայերի ընդհանուր թիվը մոտ մեկ ու կես միլիոն է, որը, բնականաբար, չի կարող արտացոլել իրական վիճակը: Որքան էլ այն ուռճացված լինի, այնուամենայնիվ մի բան պարզ է. մենք գործ ունենք հայության (մահմեդական թե քրիստոնյա) մի ստվար զանգվածի հետ: Թերևս ժամանակն է, որ, ի թիվս համշենագիտության այլ բնագավառների, լուրջ ուշադրություն դարձվի նաև համշենահայության թվին ու սփռվածության աշխարհագրությանը:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՆՔ՝ ՀԱՄՇԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեմշիլները թեև զգալի չափով գտնվում են թուրքական մշակույթի ազդեցության տակ, բայց հիմնականում պահպանել են ազգային ծեսերը, սովորույթները, երգն ու երաժշտությունը, պարերը, կենցաղավարության շատ յուրահատկություններ, շատերը՝ նաև մայրենի բարբառը: Հատկանշական է, որ հիմնականում խուսափում են խառն ամուսնություններից և օտար գերեզմանատներում թաղումներից:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ОДНО ВАЖНОЕ СВИДЕТЕЛЬСТВО 1776 ГОДА ОБ АМШЕНСКИХ АРМЯНАХ-МУСУЛЬМАНАХ

СЕРГЕЙ ВАРДАНЯН

На протяжении многих веков история армянского народа была отмечена борьбой против поработителей, погромами и насильственным обращением в другую веру. В данном контексте особый интерес представляют исламизированные амшенские армяне, еще в XIX веке привлекшие интерес армянских и ряда зарубежных ученых, таких как: Гукас вардапет* Инчичян[1] и Минас вардапет Бжшкян[2], немецкий ученый Карл Кох[3], Саргис Айкуни[4], П. Тумаянц[5] и др. Это перечисление, однако, следовало бы начать с имени Погоса вардапета Мегеряна, члена Венецианской конгрегации Мхитаристов, который в 1776г. побывал в селе Хевак провинции Амшен. Изложенные в его мемуарах[6] свидетельства представляют исключительную важность для арменоведения.

Погос Мегерян родился в селе Аринч провинции Муш; получил сан в 1767г.,[7] приобрел ценные манускрипты[8] для библиотеки мхитаристов. Так, в 1775 г., будучи в городе Карин, он поручил одному дьячку, мелкому торговцу, бывавшему в разных провинциях, скупать для него манускрипты.

В Амшене дьячок остановился в доме некоего армянина, 60 лет тому назад силой обращенного в ислам. Здесь он узнает, что хозяин дома каждую субботу зажигает вечером лампаду в честь перешедшего к нему по наследству Евангелия (на самом деле Требника). Настойчивые мольбы дьячка убедили хозяина продать эту увесистую рукопись, которую впоследствии Погос вардапет переправил в Венецию. Датированный IX-Хвв., этот Требник и сегодня является самым старым.[9]

П. Мегерян побывал в ряде стран Европы (Венгрия, Германия, Голландия, Италия), Востока (Турция, Египет, Сирия), дошел до Индии. Свои путешествия он живописал в путевых заметках поистине исключительной ценности, написанных в 1811 году в возрасте 82 лет.

Скончался он 26-го февраля 1814 года[10] на острове св. Лазаря в Венеции, 85 лет от роду.

Рукописи П. Мегеряна впервые по достоинству оценил Барсег вардапет Саргисян[11]. В 1893 г. он пишет: "П. Мегерян упоминает о двухстах отуреченных армянских семьях в селе Хевак", и комментирует в сноске: "Этот неопубликованный труд, который теперь находится в нашем Хранилище рукописей, содержит большое количество интересного и важного материала о современной истории и положении армян в то время".

Рукописи Мегеряна не увидели свет и через век после опубликования Б. Саргисяном этих строк. Когда в 1992 г. мне довелось очень коротко побывать в Венеции, на острове Св. Лазаря, я поспешил лично познакомиться с рукописью, излагающей историю жизни вардапета Погоса Мегеряна, с разбросанными на разных страницах сведениями об исламизированных армянах.

П. Мегерян рассказывает, что в 1776г. в Хоторджуре, по поводу посвящения дьячков сел Кармирг и Мохракуйт в священники, приводят к ним дьячка Серобэ, который был из деревни Хевак провинции Амамашен. Старейшие попы Хоторджура свидетельствовали, что, когда хевакцы отуречились, пять-шесть домов в деревне отказались отступиться от веры, и их духовные нужды обслуживались хоторджурскими священниками. Престарелый отец Серобэ, заболев, вызвал к себе односельчан-христиан и говорит им: "200 семей из нашей деревни отуречились, и если у нас не будет священника, то сыновья наши тоже пропадут." Он завещал 2000 дахеканов на то, чтобы его девятилетнего сына Серобэ отправили в Хоторджур обучиться грамоте у мецавора** тер***-Акоба и быть готовым рукоположиться, когда настанет час. Огласив завещание, старик умер.

Его желание исполнилось в 1776 году, когда Серобэ вместе с дьячками из Кармирга и Мохракуйта рукоположился в священники[12].

Из мемуаров узнаем также, что тер-Серобэ и Погос вардапет Мегерян после обряда посвящения приходят в село Хевак, где исламизированые армяне подходят к ним поцеловать руку Мегеряна. П. Мегерян и пришедшие с ним тер-Петрос и тер-Аветис остановились в доме у Серобэ, где они отслужили обедню; послушать ее собрались и исламизированные односельчане. Узнав, что в деревне есть полуразрушенная церковь, П. Мегерян пошел, отпер ее, с помощью сельчан убрал, сделал посильную починку, после чего отслужил вместе со священниками обедню. Обращенные в магометанство хевакцы заполнили церковь, а когда попы с крестами и в ризах вышли из церкви и направились на христианское кладбище благословлять могилы, исламизированные хевакцы умоляли их благословить также могилы их предков, ибо те были христианами. Некоторые, особенно старики, слезно жалели о своем вероотступничестве и просили исповедать их. П. Мегерян поручает тер-Серобэ заботу о духовных нуждах местных христиан, а сам направляется в Ардвин.

По дороге, на берегу реки Чорох, он видит роскошные оливковые рощи и гранатовые сады. Когда он пожелал купить фруктов за деньги, ему сказали: "Заходи в сады, набирай, сколько пожелаешь, во спасение душ предков наших, ибо были они христианами". По свидетельству Погоса вардапета Мегеряна, будучи магометанами, они целовали ему руку, приглашали к себе, просили читать Евангелие во исцеление их больных, так как верили в Евангелие[13].

По нашему мнению, отрывки автобиографии вардапета П. Мегеряна, касающиеся исламизированных армян, содержат чрезвычайно важную информацию о времени и о степени вероотступничества армян амшенской деревни Хевак и Чорохского бассейна, а также об их устремлениях сохранить веру предков. Они свидетельствуют также о том, что (по крайней мере в случае с Хеваком) эта деревня амшенских армян, расположенная в непосредственном соседстве с избравшими еще во второй половине 17-ого века и к описываемому периоду уже принявшими католицизм хоторджурскими деревнями[14], не имея священников из лона Армянской апостольской церкви, обращалась к священникам католическим.

Представляем вниманию читателя отрывки из мемуаров П. Мегеряна в переводе Марданян Светланы. Выражаю ей свою глубокую признательность. Эти отрывки более подробно представлены в журнале "Патма-банасиракан андес" ("Историко-филологический журнал") 2004, N 3 и в газете "Дзайн амшенакан" ("Голос амшенский") 2004, N 4-5.

* * *

"...Привели двух дьячков из села Кармирг, одного – из села Мохракуйт и еще одного, дьячка Серобэ, из села Хевак провинции Амамашен. Кармирцы, священники и народ, и мохракуйтцы свидетельствовали на собрании за своих дьячков, в то время как за Серобэ из Хевака никто из его деревни не свидетельствовал. А посему старейшие попы Хоторджура засвидетельствовали, что, когда хевакцы отуречились, были там пять или шесть домов правоверных, которых обслуживали приходящие священники из Хоторджура. Был там старик один, отец дьячка Серобэ. И старик, заболев, пригласил к себе правоверных братьев своих села Хевак и говорит им: "Любимые мои братья, вы знаете, что в наши дни 200 домов из нашей деревни отуречены, и правоверная святая вера наша благословением Божьим сохранила нас; и вот, нет у нас священника, и я боюсь, что впредь пропадут наши и ваши сыновья без священника." Говорят ему: "Что же нам делать, отец?" И говорит им старик: "Вот мой сын Серобэ, ему 9 лет; даю вам и 2000 дахеканов: отведите моего Серобэ в Хоторджур, к их мецавору тер-Акобу, чтобы жил там и учился и, когда наступит время, приведите его и посвятите в сан, чтобы не пропали дети наши, как пропали наши односельчане." Завещав это, старик умирает. И они выполнили его завещание.

Засвидетельствовано это все мецавором Хоторджура тер-Овсепом, старцем тер-Маргаром села Чичапах, тер-Алексаном и тер-Карапетом деревни Сюняц, тер-Погосом села Кахмхут, тер-Ованнесом села Хантадзор и т.д.

А что касается двух дьячков из Кармирга, дьячка из Мохракуйта и хевакца Серобэ, они были рукоположены, как полагается, при свидетельстве священников и народа.

О моей поездке в Ардвин

Глава VIII

Через несколько дней после празднования дня Богоматери в Хоторджуре взял я новопосвященных попов: тер-Аветиса из Мохракуйта, хевакца тер-Серобэ из Амамашена и чичапахца тер-Петроса, и направился в Мохракуйт, где тер-Аветис торжественно и звучно отслужил обедню, после чего священника, отслужившего обедню, по армянскому обычаю с песнопениями и в церковном облачении, сопроводили домой.

...После этого, когда прошло несколько дней, взял я тер-Петроса, новопосвященных тер-Аветиса и амшенца тер-Серобэ и пошли мы в Амамашен, в деревню Хевак. Но в дороге... нас настала буря, было так холодно, что мы и не чаяли выжить. Я заставлял их есть, но мясо обледенело, было твердым как камень; даже халва окаменела так, что невозможно было есть. А был месяц сентябрь; говаривали, что по этим местам в октябре пройти и вовсе невозможно – в Хевак люди добирались по реке Чорох. Спустились мы с горы, а когда вошли в деревню, мужчины и женщины села, отуреченные, слева и справа целовали мне правую руку. Остановились в доме новопосвященного

Серобэ, у отца которого были братья, и были зажиточны. В первую очередь поставили стол и отслужили в доме службу — я, тер-Петрос и тер-Аветис; увидеть службу пришли в дом отуреченные. Спросил я их: "Есть ли здесь церковь?" "Есть, — сказали они, — но развалины." И когда я увидел, что починить ее легко, сразу починил, убрали ее человек пять-шесть, потом омыл неподвижный каменный стол вином и водой, ибо церковь была освящена, а дверь заперта: никто не входил и не выходил из нее; и поэтому благословил я ее и мы, трое священников, отслужили в ней обедню. Видели бы вы, как заполнилась вероотступниками церковь во время службы; и не смог я изгнать их посохом своим. Ибо был во мне страх, что выдадут меня инородцам, сказав, что этот вардапет пришелде обармянить хевакцев. И был месяц сентябрь, и мы, четверо священников, славно отпраздновали праздник Святого Креста.

...После обедни, как полагается по обычаю нашего народа, пошли мы из церкви, в ризах и с крестом, благословить могилы правоверных, а вероотступники-селяне столпились вокруг нас, положили снедь на могилы ушедших своих, и умоляли меня тот и этот, «Приходи и благослови могилы наших предков, ибо они были христиане». Некоторые, скорбили о своем безверии и просили исповедать их, особенно старики. Но несколько старых женщин, не отступили, миловал и поручил новопосвященному тер-Серобэ заботу о них.

... И шли мы по берегу реки Чорох, украшенному садами, оливковыми рощами и благородными фруктовыми деревьями. Я не видел таких обильных добрых плодов, особенно граната, ибо деревья были большие, ветви их сплелись. Я проходил верхом под деревьями; большие надтреснутые от зрелости гранаты лежали на дороге — я брал и вкушал их. И на мой вопрос "Почему даете пропадать благородным плодам?", говорили они "А что нам делать, покупателя нет?" И когда я просил у них плодов за деньги, отвечали "Войди в сад, собери по твоему желанию чего захочешь, ешь, бери и уходи — за души тех, кто сажал эти деревья, ибо они были христианами". Хотя предки их были отступниками, сами они были добродушны и гостеприимны и вежливы, целовали мне руку, как христиане, и водили меня к себе домой читать Евангелие для больных своих, ибо верили в Святое Евангелие.

Три дня мы шли из Хевака в Ардвин; 5-го октября 1776 г. остановился я в доме тер-Овсепа, который принял нас радушно, как и горожане."

Зилкале

Примечания:

* Вардапет — сан Армянской апостольской церкви, соответствующий архимандриту.

** Мецавор — главный священник групп сел в Хоторджуре, подчиняющийся предводителю Каринской епархии. Часто занимал также должность сельского старосты.

*** Тер — приставка перед именем священника, соответствующая слову "отец".

1. Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն առաջին. հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 396-397:

2. Մ. Բժշկեան. Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով. Վենետիկ, 1819, էջ 92-93, 97:

3. K. Koch. Wanderungen im Oriente wahrend der Jahre 1843 und 1844, II, Reise im pontischen Gebirge und turkischen Armenien. Waimar, 1846.

4. Ս. Հայկունի, Կորած ու մոռացուած հայեր (Տրապիզոնի հայ-մահմետական գիւղերն ու նրանց աւանդութիւնները), «Արարատ», Վաղարշապատ, 1895, N7, էջ 239-243, N8, էջ 293-297: Ս. Հայկունի. Տէր Կարապետ քահանայ Թորոսլիցի. - Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 702-709: (Հայկունուց օգտվելով Հ. Աճառյանը վերապատմել է «Քննություն Համշենի բարբառի» գրքում, Երևան, 1947, էջ 5-8): Ս. Հայկունի. Յուսէփցի ազգատոհմ և տարօրինակ աւազակ Աբրիեսմ Տրապիզօնի հայ գիւղերու մէջ, 1795-1840. Վաղարշապատ, 1905, էջ 5-8:

5. Պ. Թումայեանց, Պոնտոսի հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, «Լումայ», Տփխիս, 1899, յուլիս, էջ 174-177:

6. Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պօղոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու. Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. N 560:

7. Մխիթարեան յոբելեան 1701-1901. Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 218:

8. Բ. Սարգիսեան, Գ. Սարգսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 1-49:

9. Ս. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Դ, Վենետիկ, 1993, էջ ԺԹ-Ի:

10. Բ. Սարգիսեան, Գ. Սարգսեան, Նշվ. աշխ., էջ 4-5, Ս. Ճեմճեմեան, Նշվ. աշխ., էջ ԺԹ, ինչպես նաև՝ Հ. Գր. Ս. Ա Մաշտոցը. - «Բազմավեպ», 1949, N 5-6, էջ 114-115: Մխիթարեան յոբելեան 1701-1901, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 218:

11. Բ. Սարգիսեան, Ուսումնասիրութիւն մանիքեա-պաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը. Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 102:

12. Պատմութիւն վարուց Տեառն Հ.Պօղոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու. Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. N 560, էջ 161, 162, 164:

13. Նույնը, էջ 167-170:

14. Յ. Հուլունեան եւ Մ. Հաճեան, Յուշամատեան Խոտորջուրի. Վիեննա, 1964, էջ 165, G. Hofmann. IL vicariato apost. di Constantinopoli, 1453-1830. Roma 1935, p. 128-129, տե՛ս Յուշամատեան Խոտորջուրի, էջ 166:

ПОЭЗИЯ

КРИКОР МАЗЛУМЯН
г. Сочи, п. Лазаревское

Земля Амшена

Страна туманов и страна дождей,
Мерцанье вечных звезд над
изголовьем,
Прикован я к твоим горам,
как Прометей,
К тебе, Каджкар, прикован я любовью.

Страна ущелий и страна лесов,
Дремучих, мрачных и непроходимых.
И переливы птичьих голосов,
И незнакомых, и таких любимых.

Как я люблю, Пархар, твои отроги,
Лугов альпийских травы в серебре...
И пастухи, сидящие, как боги,
В раздумьях о Вселенной и себе.

Который раз встают хребты Пархара
Из беспокойных бесконечных снов,
Овец библейских теплые отары
Передо мной, как море валунов.

Неужто я когда-нибудь из снов,
Освободясь от сладкого их плена,
Из вековой тоски вернувшись вновь,
Не прикоснусь стопой земли Амшена?

Пахари Амшена

Я кожей помню воздух деревенский,
Ещё земля в тумане до зари...
О пахари родных полей амшенских,
Уже вы за холмом, богатыри.

Земля моя! Какой здоровый запах!
От борозды такой бодрящий пар.
Вдали сияет белая папаха
Твоей вершины, вечный мой Каджкар.

А к полудню, когда лютует солнце,
Подобный солнцу, рыжий мальчуган
Спасительней самой воды в колодце
Из хноци несет амшенский тан.

О пахари могучие Амшена!
Как вам чужда мирская суета.
Играют мускулы легко и вдохновенно,
Как копии Пархарского хребта.

Всё было так. От века и до века.
Омыт дождями. Солнцем опален.
И не было в Амшене человека,
Чтоб пахарю не отдавал поклон.

От моря Черного и до прохлады Вана
Вел борозду, пел песни оровел.
Теперь лишь след кровавый ятагана,
Который никого не пожалел.

И в этом мире, столь несовершенном,
Лишенном тех живительных корней,
Как я хочу вас, пахари Амшена,
Хотя бы в песне воскресить своей.

К Чороху

Как часто я беседовал с тобой
И был уверен, что меня ты слышишь...
Вот наконец я обнимусь с волной,
Которая самой любовью дышит.

«Чорох-чорох» — волна вослед другой
О берег бьется тихо и печально.
Склонюсь к тебе и плачу над тобой,
Моей любви источник изначальный.

Тот тихий свет далекий, деревенский,
Волнует сердце мне через века.
Ты слез река. Река в крови
амшенской,
Но ты и жизни вечная река.

В волнах твоих такое струй смешенье,
Мне чудятся сквозь тот далекий день
То чистая слеза невест амшенских,
То черная от янычара тень.

Как часто я беседовал с тобой...
И вот твоя в моих ладонях влага
В тебе одном, Чорох, в тебе одном -
Свет матерей и прадедов отвага!

Дороги Амшена

Через леса и вдоль речушек пенных,
Не временем разрушенных могил
Я вновь иду дорогами Амшена,
Которыми прапрадед мой ходил.

Прошли по ним и годы, и эпохи,
И конные, и пешие прошли...
Ко мне сквозь кожу тонкую чорохов
Стучится память дедовской земли.

Вас отыскав, амшенские дороги,
В дыму веков я различить не смог,
В чем путника измученные ноги —
Сочится кровь или кизила сок?

А он идет. Под тяжестью хурджина,
Судьбу Амшена на себе несет...
Святому Духу и Отцу и Сыну
Он молится. И в том надежда вся.

Как высоки амшенские дороги
Над пропастью, над шумною рекой.
Коль их прошел — уже ты
ближе к Богу...
Амшенца там, увы, не ждет покой.

Ты вся в шипах, амшенская дорога,
Меж диких скал ведущая во мглу.
И всё-таки мои тоскуют ноги
По пыли твоей древней и теплу.

Двадцатый век. Омытая слезами,
Судьбы армянской горькая стезя...
И смотрят в душу мне с
тропы Варшама
Прапрадеда молящие глаза.

Небо Амшена

А ты не видел небо над Амшеном?
Как душу очищает высота
Звезды единственной, едва-едва
взошедшей
Над склонами Пархарского хребта!

А ты не видел небо над Амшеном?
Где Млечный путь. И вечный свет в пути.
И зрил ли в равновесии душевном
Себя частицей этого пути?

А ты не видел небо над Амшеном?
Грозу, что может землю расколоть?
И молниею старый дом сожженный,
И дерева обугленную плоть?

А ты не видел небо над Амшеном?
В дыму пожарищ, черное, как смоль?
И беженцев поток страны моей
священной -
Сплошную рану и сплошную боль?

А ты не видел небо над Амшеном?
Когда закат над далью розовел?
Где звуки песни древней, задушевной,
Что пел до содроганья оровел!

А ты не видел небо над Амшеном?
В лучах зари. В цветении весны?
Амшенца лик, свободой озаренный,
Победный клич даула и зурны!?
Нет... Я не видел небо над Амшеном.

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է 150 ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Համահայկական կրթական երկրորդ խորհրդաժողովին մասնակցում էր նաև Թբիլիսիի թիվ 95 հայկական միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի ՌՈԶԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ, որին գիտեի մոտ երկու տասնամյակ՝ Ներքին Սփյուռքին նվիրված տարբեր ժողովներում նրա սրտացավ ելույթներից: Այս անգամ էլ նրա խոսքը բովանդակալից էր և հուզական: Խնդրեցի պատմել Վրաստանի հայկական դպրոցների վիճակի մասին:

Ռոզա Զոհրաբյան

– Այսօր Վրաստանում գործում են մոտ 150 հայերեն ուսուցմամբ 9-ամյա և միջնակարգ դպրոցներ, որոնցում աշակերտների թիվը հասնում է 22 հազարի: Այս դպրոցները ֆինանսավորվում են պետության կողմից, պետությունն է ֆինանսավորում նաև Հայկական պետական դրամատիկական թատրոնը, պետական հեռուստաալիքով շաբաթը երկու անգամ 15 րոպեանոց հայերեն հեռուստահաղորդումը, պետական ֆինանսավորմամբ է տպագրվում «Վրաստան» թերթը…

– Իսկ Թբիլիսիում բացի «Վրաստանից», ուրիշ հայերեն թերթեր հրատարակվո՞ւմ են:

– Այո՛, և հետաքրքիր է, որ հիմա հայերեն թերթեր են տպագրում նաև հայկական դպրոցները, օրինակ՝ թիվ 131 դպրոցը հրատարակում է «Զրուցակից» թերթը, թիվ 104 դպրոցը՝ «Վանք» թերթը…

Ցավոք, Վրաստանի տնտեսական ծանր կացության պատճառով տեղի է ունենում արտագաղթ, նվազում է հայերի թիվը, բնականաբար, նվազում է նաև հայ աշակերտների թիվը: Շատ ծնողներ էլ հին սովորույթով երեխաներին տանում են ռուսական դպրոց, ոմանք էլ պատճառաբանում են թե իրենց ապագան կապում են Ռուսաստանի հետ, պիտի գնան Ռուսաստան ապրելու կամ աշխատելու և այլն: Ահա այսպիսի հանգամանքները խանգարում են հայկական դպրոցներին գոյատևել…

– Աշակերտների թիվն ազդու՞մ է դպրոցների ֆինանսավորման վրա:

– Այո՛, Վրաստանի կրթական բարեփոխումները մեծ չափով ազդեցին ընդհանրապես բոլոր դպրոցների՝ վրացական, հայկական, ադրբեջանական, ռուսական փոքրաքանակ աշակերտներ ունեցող դպրոցների վրա: Առավելապես այն ազդեց Թբիլիսիի հայկական դպրոցների վրա, քանի որ մեր աշակերտները քիչ են: Դպրոցների վաուչերային համակարգով ֆինանսավորումը ի՞նչ է նշանակում՝ յուրաքանչյուր երեխայի համար տարեկան տրվում է 220 լարի, որը տարեկան մոտավորապես 110-120 դոլար է անում: Ասենք, մեր դպրոցն ունի 100 աշակերտ, տարեկան հատկացվում է 12 հազար դոլար, որ դպրոցը կարողանա թե՛ ուսուցիչներին աշխատավարձ տա, թե՛ վճարի տեխնիկական, կոմունալ ծախսերը (ջուր, գազ, էլեկտրականություն, հեռախոս), էլ չեմ ասում, թե ընթացիկ ինչքան ծախսեր են լինում: Այսօր այս վիճակի առջև են կանգնած ոչ միայն հայկական դպրոցները, այլև վրացական: Ես ուզում եմ այս պահը շեշտել, որ փոքրաթիվ աշակերտներ ունեցող վրացական դպրոցների վիճակը ևս ծանր է: Բայց շրջաններում ավելի լավ է, գյուղն ինչ-որ չափով հոգում է դպրոցի հոգսերը, դպրոցի պատճառով հո գյուղը չե՞ն տեղահանելու, ուրեմն պետք է դպրոցը պահպանեն: Այսօր մեզ Վրաստանի կառավարությունն ասում է, եթե դուք հնարավորություն ունեք բացի պետության հատկացրած միջոցներից ֆինանսավորման այլ աղբյուրներ գտնել՝ խնդրեմ, դուք պահեք դպրոց թեկուզ մեկ աշակերտի համար:

– Իսկ մասնավոր դպրոցների վիճակն ինչպե՞ս է:

– Մասնավոր դպրոցների վիճակն ավելի լավ է, բայց հայկական մասնավոր դպրոցներ չկան:

Թբիլիսիում ամենամեծը 104-րդ դպրոցն է, որն ունի 160 աշակերտ: Վաղը, մյուս օրը, եթե մենք չկարողանանք հայկական դպրոցները խոշորացնել, ուրեմն պետք է դպրոցները միացնենք, այդ էլ կբերի նրան, որ շատերի համար դպրոցը կլինի տնից հեռու և չեն գա հայկական դպրոց, և այսպես հայկական դպրոցները կփակվեն:

Այսօր Թբիլիսիում գործում է 8 հայկական դպրոց, որից երկուսը զուտ հայկական են, դա թիվ 95-ն է, որտեղ ես եմ աշխատում, և թիվ 104-ն է: Մյուս 6 դպրոցներում կան հայկական բաժիններ, թեև ռուսական բաժինների աշակերտների մեծ մասը ևս հայեր են: Մեր դպրոցում կար 100 աշակերտ, ավարտեց 11 աշակերտ, բայց արդյո՞ք մենք այս տարի նոր 11 աշակերտ կունենանք, որպեսզի այդ 100-ը լրանա:

– Քանի՞ ուսուցիչ կա Ձեր դպրոցում:

– 25 ուսուցիչ: Մեր բոլոր հաստիքները կրճատվել են, 3 հավաքարարի փոխարեն այժմ 1 հավաքարար ենք պահում, գործավար էլ չունենք, նաև այլ հաստիքներ, որոնք անհրաժեշտ են դպրոցին, որպեսզի կարողանանք ուսուցիչներին վճարել:

– Իսկ ուսուցիչների կարիք չունե՞ք:

– Առայժմ՝ ոչ, բայց կգա ժամանակը, որ պահանջ կունենանք, որովհետև ուսուցիչների մի մասն արդեն երիտասարդ չէ:

– Դպրոցում քանի՞ լեզու եք անցնում:

– Մենք անցնում ենք 4 լեզու՝ հայերենը որպես մայրենի լեզու, վրացերենը որպես պետական լեզու, ռուսերենը որպես օտար լեզու, բայց, երևի, կարելի է ասել՝ ազգամիջյան հարաբերությունների լեզու, իսկ օտար են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը:

Պետական լեզուն վրացերենն է, վրացերենին մեծ տեղ է տրվում թե՛ պետության կողմից, թե՛ մեր դպրոցներում: Այլ կերպ մենք իրավունք էլ չունենք, մենք ապրում ենք Վրաստանում, մենք աշխատում ենք տարբեր կառույցներում, պետական թե մասնավոր հիմնարկ–ձեռնարկություններում և հայի համար ուղղակի անհրաժեշտ է տիրապետել վրացերենին:

– Հայաստանից դասագրքեր ստանո՞ւմ եք:

– Հայաստանից դասագրքերը, ծրագրերը ստանում ենք անվճար, բայց հիմա կանգնելու ենք բարդության առաջ, որովհետև նոր օրենք է ընդունվել, որ դասագրքերը պետք է թարգմանվեն վրացերենից հայերեն և տպագրվեն Վրաստանում, և այդ գրքերը, ինչ խոսք, պիտի գնենք:

– Իսկ հայ ժողովրդի պատմություն անցնո՞ւմ եք:

– Ո՛չ, չենք անցնում: Անցնում ենք Վրաստանի պատմություն, դասագիրքը թարգմանվել է հայերեն: Հայաստանի պատմություն չենք անցնում, որովհետև գիտնականների միջև կան տարաձայնություններ, վրացի գիտնականները այլ կերպ են գրում, հայ գիտնականները՝ այլ կերպ: Եղբա՛յր, թող հայ և վրաց պատմաբանները նստեն և քննարկեն, մի ընդհանուր եզրակացության գան, շրջանցեն սուր հարցերը:

Անցյալ տարվանից ունենք Ազգային միասնական քննություններ, որոնց ժամանակ հայ երեխան, ռուս երեխան, ադրբեջանցին այս տարի քննությունները հանձնելու են նույն թեստերով…

– Վրացերե՞ն…

– Այո՛, վրացերեն: Սա սխալ է: Սխալ է, որովհետև մենք վրացերենը անցնում ենք ոչ նույն մակարդակով, ինչ վրացական դպրոցում, մենք՝ ուսուցիչներս, կարծում ենք, որ պիտի տարբերակում լինի: Հիմա հայկական դպրոցներում երբեմն երեխաները իրար հետ վրացերեն են խոսում, հատկապես այն երեխաները, ովքեր վրացական միջավայրում են ապրում:

– Իսկ այժմ խնդրում եմ պատմեք Ձեր մասին, ես գիտեմ, որ Դուք նաև հասարակական ակտիվ գործունեություն եք ծավալել:

– Ես ունեմ 35 տարվա մանկավարժական ստաժ: Ավարտել եմ Թբիլիսիի նախկին Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, անմիջապես դրանից հետո աշխատել եմ թիվ 92 դպրոցում, որպես ավագ ջոկատավար, հետո տեղափոխվել եմ 95-րդ դպրոց, աշխատել եմ ուսուցիչ, փոխտնօրեն, Կրթության նախարարության հանրապետական մեթոդական կենտրոնում որպես հայոց լեզվի մեթոդիստ, դրանից հետո, երբ լուծարվեց այդ բաժինը ես աշխատեցի Կրթության նախարարության ազգային փոքրամասնությունների ծրագրերի ծրագրավորման վարչության փոխկապակցման գլխավոր մասնագետ, այն էլ 2 տարի հետո լուծարվեց: Ասեմ, որ զուգահեռաբար միշտ աշխատել եմ իմ սիրելի դպրոցում: 1995-ից սկսած Սուրբ Գևորգ եկեղեցուն կից Եղիա մարգարեի անվան կիրակնօրյա դպրոցում հայերեն եմ սովորեցնում ռուսախոս հայ երեխաներին: Վրաստանի հայերի միության վարչության անդամ եմ, ղեկավարում եմ կրթության և մշակույթի բաժինը: 1996-1997թթ. մեր գրասեր նվիրյալների ջանքներով և Ժորա Սնխչյանի ղեկավարությամբ ստեղծեցինք Վիրահայոց գրողների «Վերնատուն» կազմակերպությունը, որի գրականության քարոզչության և մասսայականացման բաժնի ղեկավարն եմ: «Վերնատան» մեջ ընդգրկված են ոչ միայն գրողները, այլև հայ ուսուցիչները, գրասեր հասարակությունը: Չեմ ասում թե Թումանյան ենք ծնում, Նարեկացի, բայց հայապահպանության համար նման գրական կազմակերպությունը շատ կարևոր է: Ունենք «Ծիլեր» ակումբ, որին անդամագրված են ուսանողներ և մեր բարձր դասարանցի աշակերտները: «Ծիլերի» անդամների ստեղծագործություններով հրատարակել ենք «Զարթոնք» վերնագրով գիրք:

Նաև «Սայաթ-Նովա» համույթում մեներգչուհի եմ, ռուսական դպրոցում հայերենի ուսուցիչ եմ, հազարավոր միջոցառումներ եմ անցկացրել, դասերս երգ-երաժշտությամբ են անցնում, որովհետև մեր շատ գրողների՝ Սայաթ-Նովայի, Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, Շիրազի, Սևակի ստեղծագործություններ երգերի են վերածվել և ես էլ աշակերտներիս հետ երգում եմ:

– Մաղթում եմ, որ Ձեզ և Ձեր աշակերտներին միշտ ուղեկցեն հայկական երգն ու երաժշտությունը:

Զրուցեց՝ Ս. Վարդանյանը

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Իսլամից քրիստոնեություն դարձ կատարած և նախնիների ազգանունը վերականգնած արձակագիր Տիգրան Կոստանյանը վկայում է. «Մեր ծննդավայր Ռիզէ քաղաքին բնակիչներէն շատեր գիտէին, թէ հայեր են: Մենք գերեզմանատուն չենք ունեցած թուրքերուն հետ, այլ մեր հանգուցեալները կը թաղենք մեր պարտեզներուն մէջ» (Դիտակ, 2002, մարտ - ապրիլ):

Ազգային ինքնության գիտակցումն ու այն պահպանելու ջանքերն ունեն հետաքրքիր ու ինքնատիպ դրսևորումներ: Դրանցից թերևս պետք է կարևորել հետևյալները.

ա. Մայրենի լեզվի (բարբառի) պահպանումը: Անգամ թրքախոս (արևմտյան) համշենահայերի մի մասը տիրապետում է Համշենի բարբառին, իսկ արևելյան (Արդվինի նահանգի) համշենահայերը հիմնականում պահպանել են մայրենի բարբառը.

բ. Մեծ չափով պահպանել են ավանդույթները, ծեսերը, սովորույթները, բանահյուսությունը, ժողովրդական երգերն ու պարերը, երաժշտական գործիքները, տարազը և այլն: Խիստ ուշագրավ է հետևյալ արտառոց փաստը. բոլոր իսլամացած համշենահայերը (թե հայախոս, թե թրքախոս հեմշիլները) յուրաքանչյուր տարի՝ հուլիսի 15-22-ը, Ռիզեի նահանգի Չամլիհեմշին բնակավայրում տոնում են Վարդավառը (Վարթիվոր): Թեև հասկանալի պատճառներով կրոնական ծիսակարգը վերացել է, բայց այն վերածվել է ազգային երաժշտության, պարի ու ավանդույթների թատերականացված յուրահատուկ տոնի (երգերի մի մասը թրքաբառ է, սակայն Խոփայի հայերը պահպանել են նաև հայաբառ երգերը): Ընդհանրապես շատ ու շատ հարցեր դեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին՝ պարզելու, թե հատկապես վերջին 2-3 դարերի ընթացքում էթնոմշակութային ինչ օտար ազդեցությունների են ենթարկվել իսլամացած համշենահայերը (հեմշիլները), ինչ են կորցրել, ինչ են պահպանել և այլն:

Այս հարցերի (և ընդհանրապես պոնտահայության) նկատմամբ 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին հայագիտության մեջ մեծ հետաքրքրություն դրսևորվեց. հրատարակվեցին բազմաթիվ աշխատություններ հայ և օտարազգի հեղինակների կողմից (Ս. Հայկունի, Ն. Խշտյան, Բ. Կյուլեսերյան, Պ. Թումայանց, Մ. Բժշկյան Ղ. Ինճիճյան, Ն. Մառ, Ն. Դերժավին, Պ. Կորոլենկո, Ս. Մինցլով, Կ. Կոխ և այլք): Հետագա 50-60 տարիներին այս հետաքրքրությունը տեղի տվեց. այդ շրջանից կարելի է հիշատակել մի քանի անուն՝ Հր. Աճառյան. Լ. Մելիքսեթ-Բեկ, Ժ. Դումեզիլ...

Սակայն 70-ականներից սկսած որոշ դրական տեղաշարժ է նկատվում համշենագիտության մեջ: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ աճող հետաքրքրությունը չշրջանցեց նաև համշենահայերին. հայ, ռուս, գերմանացի, հոլանդացի, ամերիկացի, թուրք, վրացի և այլ մասնագետներ (Լ. Խաչիկյան, Բ. Թոռլաքյան, Վ. Բդոյան, Ս. Վարդանյան, Ա. Տեր-Սարգիսյանց, Ժ. Խաչատրյան, Հ. Սիմոնյան, Ժ. Դումեզիլ, Ջ. Ռասսել, Ջ. Վայտենբերգ, Ու. Բլեսինգ, Ռ. Էդվարդս, Բ. Վուքս, Ի. Կուզնեցով, Մ. Սաքաօղլու, Ծ. Բաճաշի, Ի. Շիլակաճե և այլք) վերջին 20-30 տարում հրատարակեցին մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված Համշենի և համշենահայության պատմությանը, ազգագրությանը, բարբառին, դավանանքին, մշակույթին, տարազին և այլն:

Վերջին տարիներին այս հարցով հետաքրքրվողների թիվը գնալով մեծանում է, և ուրախալի է, որ ուսումնասիրողների թվում կան նաև բուն հեմշիլներ: Հիշատակեմ մեկի անունը՝ Ալիե Ալթը, որը ծնվել և մեծացել է Ռիզե քաղաքում, սովորել է Ֆրանկֆուրտի համալսարանում: Մկրտվելուց հետո ընդունել է նախնիների ազգանունը՝ Կոստանյան (Ալիս Կոստանյան): Գերմաներեն լեզվով արժեքավոր աշխատություն է հրատարակել իսլամացած համշենահայերի մասին, որը թարգմանվել է նաև հունարեն:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎԱՐՑՅԱՆ

ՍՈՒԽՈՒՄԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Չայն համշենական» թերթը միշտ մեծ ուշադրություն է դարձրել Աբխազիայի և ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայկական, կամ հայերենի ուսուցմամբ դպրոցներին, բայց, ցավոք, չի կարողացել ավելի հաճախ անդրադառնալ հայկական եկեղեցիների և տարբեր կրոնական համայնքների խնդիրներին: Բարեբախտաբար, 2006թ. տարեվերջին հնարավորություն ունեցանք հանդիպելու Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի Աբխազիայի նորաստեղծ հովվության հոգևոր հովիվ, հոգեշնորհ Տեր Տարոն աբեղա Ղուլիկյանին: Նրա հետ հարցազրույցը տպագրվեց մեր թերթի 2006թ. թիվ 11-12-ում:

Աբխազիայի և ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայության շրջանում տիրող կրոնական իրավիճակն ավելի ամբողջական պատկերացնելու համար տպագրում ենք նաև մեր զրույցները Սուխումի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Միհրան Թորոսյանի, և Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Սասուն Կարախանյանի հետ:

Վերապատվելի Միհրան Թորոսյանը բնակվում է Աբխազիայի Գուլրիփշի շրջանի Փշապ գյուղում: Նրան խնդրում եմ պատմել իրենց գյուղի մասին:

– Առաջ 170 տուն էինք, հիմա որոշ տներում մարդ չի ապրում: Մեծամասնությունը հայեր են, կան մի 10 տուն աբխազներ: Հայերը հիմնականում տրապիզոնցիներ են: Իմ պապը Տրապիզոնի վիլայեթից եկել է 1890-ին, բնակություն հաստատել Ծեբելդա գյուղում, որտեղ 1937-ին ծնվել եմ ես: 1959-ին մեր ընտանիքը տեղափոխվել է Փշապ, ցանկանում էինք ծովին ավելի մոտ լինել:

– Վերապատվելի, խնդրում եմ ներկայացրեք Ձեր գյուղի կրոնական իրավիճակը:

– Մեր գյուղի բնակիչները հիմնականում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են, ուզում են գյուղում հայկական եկեղեցի կառուցել, հնում եղել է, բայց քանդել են: Ես 1973թ. Հայ Ավետարանական եկեղեցու անդամ եմ, մեր գյուղում 10-15 հայ ավետարանականներ կան: Մեր գյուղի, Ծեբելդայի, Մաջառկայի, մյուս գյուղերի հայ ավետարանականների հետ շաբաթը երկու անգամ հավաքվում ենք, շաբաթ օրը Լեչկոպում, մեր հավատացյալներից մեկի տանը, իսկ կիրակի օրը, 1975-ից սկսած, Սուխումի Ռուսական Մկրտական եկեղեցում, առավոտյան ռուսներն են հավաքվում, իսկ ժամը 1-ից հետո՝ մենք:

– Երբ է հիմնվել Սուխումի Հայ Ավետարանական եկեղեցին:

– Սուխումում հայ ավետարանականներ եղել են դեռևս 1917թ. հեղափոխությունից առաջ: Խորհրդային տարիներին նրանց գործունեությունը արգելվել է: Սուխումի ներկայիս Հայ Ավետարանական եկեղեցին հիմնվել է 1960թ.՝ 17 հավատացյալների ջանքերով: Հովիվը եղբայր Նալբանդյանն էր: Հինգ տարի հովվելուց հետո նա մահացավ, և նրան փոխարինեց որդին՝ Կարո Նալբանդյանը: Երկու տարի հետո նա տեղափոխվեց ԱՄՆ և նրան փոխարինեց Օնիկ Կոնոլյանը, որը 1985-ին նույնպես տեղափոխվեց ԱՄՆ և այդ թվականից ես առ այսօր առաջնորդում եմ հոտը: Ես ձեռնադրվեցի 2001թվականին, իսկ մինչ այդ՝ 1985-ին ձեռնադրվել էի սարկավագ:

– Քանի՞ անդամ ունի Ձեր եկեղեցին:

– Եթե հաշվենք հիմնադրման օրվանից, թե քանի անդամ է ունեցել մեր եկեղեցին, կարելի է ասել, որ տարբեր ժամանակների բոլոր անդամներին հաշվելով կլինի մոտ 700 հոգի: Նրանց մեծ մասը, բնականաբար, վաղուց մեզ հետ չէ, մահացել են, մի մասը տեղափոխվել է այլ քաղաքներ կամ երկրներ, իսկ վրաց-աբխազական պատերազմի հետևանքով շատերն արտագաղթեցին: Պատերազմի սկզբում մեր համայնքն ուներ 87 անդամ, հիմա՝ 40 անդամ:

Սուխումում տարբեր կրոնական համայնքներ կան՝ հոգեգալստականներ, շաբաթապահներ, Եհովայի վկաներ...: Եհովայի վկաները շատ են, նրանց մեջ հայեր կան, ռուսներ, աբխազներ, շրջում են գյուղերով, մեր գյուղում էլ մի քանիսը կան:

ՍՈՉԻԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Սասուն Կարախանյանին խնդրում եմ պատմել իր մասին:

– Ծնվել եմ 1956թ. Աբխազիայում՝ Գուլրիփշի շրջանի Միկոյան (Մյասնիկով) գյուղում: Մայրս տրապիզոնցի է, եղել է հայկական դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի, հայրս նույնպես ուսուցիչ էր՝ հայոց լեզվի և գրականության, դասավանդում էր Միկոյանում, հարևան գյուղերում, դպրոցի տնօրեն է աշխատել Խումուշկուրում:

– Սասո՛ւն, քո անունից դատելով, երևի, հայրական կողմից սասունցի ես:

– Այո՛, ճիշտ կռահեցիք, հայրս սասունցի է, ծնվել է 1913թ.: Գաղթի ժամանակ երկու տարեկանում մոր գրկում է եղել, երբ թուրքի գնդակը դիպել է մորը, մայրը տեղում մահացել է: Հորս քույրը՝ Շուշանիկն է փրկել: Նրանց հայրը և հորեղբայրը՝ Մորուք Կարոն, կռվում էին թուրքերի դեմ, որպեսզի հնարավորություն տան ժողովրդին գաղթելու: Ի վերջո հաստատվում են Հայաստանում՝ Թալինի շրջանի Ահագչի (այժմ՝ Ջովասար) գյուղում:

Դպրոցն ավարտելուց հետո եկա Երևան, ընդունվեցի Պոլիտեխնիկական ինստիտուտ, չորրորդ կուրսում ամուսնացա: Ավարտեցի 1979-ին և վերադարձա Աբխազիա: Աշխատում էի հաշվիչ կենտրոնում ինժեներ, ավագ ինժեներ, բաժնի վարիչ: Դեռ երիտասարդ տարիներին ընկերներիս ու ծանոթներիս հետ հաճախ էինք քննարկում կյանքի ու մահվան հարցեր, բարոյականության հարցեր, կրոնի ու եկեղեցու հետ կապված հարցեր, մի խոսքով, այնպիսի հարցեր, որոնք, երևի, բոլորին են հուզում:

Երեսուն տարեկանում մտածում էի թե ինչպես երեխաներիս հայկական, ավանդական դաստիարակություն տամ: Արդյո՞ք ես ճիշտ եմ ապրում, որ նրանց էլ ճիշտ դաստիարակություն տամ: Ես մտածում էի, թե որն է ճիշտ ապրելը, բարեկամներիս, ընկերներիս, հարևաններիս մեջ ես չէի գտնում ճիշտ ապրողների, ամեն մեկը ինչ-որ թերություն ուներ: Աստծո ողորմությամբ ձեռքս անցավ Ավետարան, կարդացի և հասկացա, որ ես հենց այդ էի որոնում: Այդ էր Աստծո խոսքը, Աստծո լույսը: Երեք տարի անցավ, իմ կյանքը փոխվել էր, բայց չէի հանդիպում այնպիսի մարդկանց, որ տեղյակ լինեին Ավետարանից, որ նրանց հետ զրուցեի: Որոնումներս ինձ տարան Սուխումի հայ ավետարանականների և ռուս մկրտականների մոտ...

– Երբ և ինչպես հայտնվեցիք Սոչիում:

– Վրաց-աբխազական պատերազմի պատճառով չորս երեխաներիս հետ տեղափոխվեցի Սոչի: Ժամանակավոր աշխատանքներով շատ դժվար էր ընտանիք պահել: Սոչիում իմացա, որ կա Ռուս Ավետարանական եկեղեցի: Ինձ շատ ջերմ ընդունեցին: Սոչիի Ռուս Ավետարանական եկեղեցին ուներ 15 հայ անդամ: Մեկ տարի անց՝ 1994-ին դիմեցինք հովվին՝ Իվան Նիկոլաևիչ Չեխանովին, և հարցրեցինք, թե մենք՝ հայերս, կարո՞ղ ենք առանձին, պաշտամունքից դուրս եկեղեցում հավաքվել, զբաղվել սերտողությամբ, աղոթել: Նա սիրով համաձայնվեց: Մենք սկսեցինք հավաքվել: Խմբի առաջնորդն էի, բայց մենք դեռ առանձին եկեղեցի չէինք: Որպես առանձին Հայ Ավետարանական եկեղեցի մենք պաշտոնապես հայտարարվեցինք 1997թ. մարտին, երբ Հայաստանից եկավ Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Ռընե Լևոնյանը և Իվան Նիկոլաևիչի հետ խորհրդակցելով մեզ ճանաչեցին որպես Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցի: Ես ձեռնադրվեցի 2001թ.: Մենք պաշտամունքներն անցկացնում ենք Ռուս Ավետարանական եկեղեցու դահլիճում, որովհետև մենք չունենք հնարավորություն դահլիճ վարձելու և քանի որ ռուսական եկեղեցին կիրակի օրը զբաղված է, ուստի մենք հավաքվում ենք շաբաթ օրը, իսկ չորեքշաբթի սերտողության օր է:

Մենք Երևան՝ Հայ Ավետարանական Ակադեմիա ուսանելու ուղարկեցինք Էդիկ Խաչատրյանին, որը ավարտել է և այժմ որպես սարկավագ օգնում է ինձ:

– Քանի՞ անդամ ունի ձեր եկեղեցին:

– Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցին ունի ընդհանուր 54 անդամ, որից 35 հոգին հաղորդական անդամներ են:

– Իսկ Կրասնոդարի երկրամասի այլ քաղաքներում հայ ավետարանականներ կա՞ն:

– Ռուսական եկեղեցին ինձ ուղարկել էր Մայկոպ՝ աստվածաբանության դպրոցում սովորելու: Ուսման տևողությունը մեկ տարի էր, դպրոցը պատրաստում էր հովիվներ, սարկավագներ, եկեղեցու ծառայողներ: Այնտեղ ծանոթացա երկրամասի այլ քաղաքներից եկած Ռուս Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչների հետ: Հիմա, երբ տարբեր առիթներով հանդիպում ենք, նրանք ասում են, որ իրենց եկեղեցիներում ևս հայեր կան և լավ կլինի, որ այցելեմ հայերին: Քանի որ հնարավորություններս սահմանափակ են, ուստի տարեկան մեկ-երկու անգամ այցելում եմ Կրասնոդարի եկրամասի այլ քաղաքների Ռուս Ավետարանական եկեղեցիների հայազգի անդամներին, Սոչիի մոտակա գյուղերում, բնականաբար, ավելի հաճախ եմ լինում:

Ես արդեն երեք տարի է նաև Սոչիից 20 կմ հեռավորության վրա գտնվող Խոստա քաղաքի Ռուս Ավետարանական եկեղեցու ժամանակավոր պատասխանատուն եմ, մինչև եկեղեցին կունենա իր հովիվը:

Զրուցեց Ս. Վարդանյանը

ՈՐ ՉԼՔԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Բարև հարգելի խմբագրություն.

Ես 1996-ից բնակվում եմ Կրասնոդար քաղաքում: Ծագումով հերոսական Գետաշեն գյուղից եմ, բայց, ցավոք, 1988-ին բնավեր եղանք: Ես 1977-ին ավարտել եմ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետը: Այնուհետև ամուսնացել եմ և բնակվել Խանլարում: Խանլարը, որը մինչև 1938թ. կոչվել է Ելենենդորֆ, գտնվում էր Գանձակից (Կիրովաբադ) 10 կմ հեռավորության վրա: Շատ գեղեցիկ քաղաք էր, այգեշատ, գերմանացիների կառուցած որակյալ և կանոնավոր տներով: Աշխատում էի «Հեքիաթ» մանկապարտեզում, հետո «Լենինյան ուղիով» հայերեն թերթում: Արցախյան շարժման լարված օրերին ապաստանեցինք Գետաշենում, այնտեղից էլ՝ գաղթեցինք Երևան: Հայաստանում արցախյան շարժման, երկրաշարժի, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի տարիներին շատ ծանր էր ապրելը, ամուսինս գործ չէր ճարում: Ես աշխատում էի մանկապարտեզում, բայց կրճատվեցի, հետո աշխատում էի դժվար դաստիարակվող երեխաների մանկավարժ, կրկին կրճատվեցի: Եթե աշխատանք լիներ, երևի մենք Հայաստանից չէինք գնա, բայց ճարահատյալ 1996-ին տեղափոխվեցինք Կրասնոդար, ուր ազգականներ ունեինք:

Ամեն մի հայ, որտեղ էլ որ ապրի, պարտավոր է իր հնարավորությունների չափով օգտակար լինել իր ժողովրդին: Սփյուռքում ապրող հայերն ունեն ավելի շատ պարտականություններ՝ պահպանել իրենց լեզուն, երբեք չմոռանալ իրենց հայ լինելը: Մենք պետք է սատար լինենք մեկ-մեկու: Եթե մենք չսիրենք մեր ազգը, մեր լեզուն, մեր հայրենիքը, ինչպե՞ս կարող ենք սիրել ուրիշի լեզուն: Ճիշտ է, ինչ երկրում էլ որ ապրես, պետք է հարգես այդ երկիրը, այդ ժողովրդին, բայց առաջինը՝ քոնը սիրես:

Հայ մարդը չի կարող օտար երկրում իրեն տանը զգալ: Որքան էլ փառքի, հարստության արժանանա, միշտ իրեն միայնակ կզգա, թեկուզ շրջապատված լինի իր հարազատներով: Եվ գալիս է մի պահ, երբ հայ մարդը զգում է, որ այդ ամենը խաբուսիկ է և սկսում է տանջվել:

Ես արդեն 10 տարի է բնակվում եմ Կրասնոդար քաղաքում: Մեր՝ Շահումյան փողոցում շատ հայեր են ապրում: Բնականաբար, ապրում են նաև շատ ռուսներ, որոնց մեջ շատ են լավ մարդիկ:

Բայց մի անգամ լսեցի, թե կողքիս ռուս հարևանը ինչպես էր իր 16-ամյա թոռնիկին ասում, որ թող հայերը դղյակներ կառուցեն, միևնույն է, ռուսներին է մնալու: Նա վատ էր խոսում հայերի մասին, ասում էր, որ հայերը ագահ ժողովուրդ են, ուտում են, ուտում, չեն կշտանում: Ես չհամբերեցի և մոտեցա ծերունուն և ասացի. «Չե՞ս ամաչում, մի ոտքդ գերեզմանում է, ինչո՞ւ ես թոռնիկիդ հայերի նկատմամբ վատ տրամադրում»: Նա կարմրեց և ասաց, որ «Ես Ձեր մասին չեմ ասում, դուք լավն եք»: Ես ասացի. «Ի՞նչ տարբերություն, ես էլ հայ եմ»:

Այսպիսի միջադեպեր շատերի հետ են պատահում, էլ չեմ խոսում սափրագլուխների մասին: Այս դեպքերը մեզ հիշեցնում են, որ մենք Ռուսաստանում հյուր ենք: Բայց շատերը շատ արագ են մոռանում, որ իրենք հյուր են և պետք է վաղ թե ուշ վերադառնան Հայաստան, ուրեմն պետք է իրենց երեխաներին հայերեն սովորեցնեն, այնինչ շատերը Ռուսաստան ոտք դնելով սկսում են երեխաների հետ միայն ռուսերեն խոսել: Մենք պետք է այստեղ աշխատենք և օգնենք հայրենիքում մնացած մեր ազգականներին, որ հայրենիքը շուտ ոտքի կանգնի և ոչ թե օտար հողում դղյակներ կառուցենք և առիթ տանք մեր հարևաններին չարախոսելու, թե «կառուցեք, միևնույն է մեզ է մնալու»:

Ռուսաստանում մեր առաջ ծառանում է ոչ միայն լեզվի հարցը: Շատ մեծ է նաև խառնամուսնությունների թիվը, ինչը բերում է ուծացման: Ուստի, որպեսզի օգնեմ մեր հայերին իրար գտնելու և ընտանիք կազմելու, Կրասնոդարում ստեղծեցի «Արագիլ» անունով ծանոթությունների կենտրոն և այդ կենտրոնի միջոցով արդեն բազմաթիվ հայկական ընտանիքներ են ստեղծվել:

Ես նաև Կրասնոդարի «Նարեկ» կրթամշակութային կենտրոնում ղեկավարում եմ հայոց լեզվի և գրականության խմբակը, որպեսզի մեր երեխաները չմոռանան իրենց մայրենին:

Հայերեն խոսենք, հայերեն լսենք,
Հայերեն բարի օր ասենք, բարի խոսք լսենք,
Մեր հայերենով սիրենք ու հարգենք,
Որ բարի լինի մեր օրը այսօր:
Մոր նման սիրենք, մոր նման պաշտենք,
Մայրենի լեզուն սիրենք ու հարգենք,
Մայրենի լեզվով մեր բալիկներին,
Հեքիաթներ պատմենք, օրորոցային երգենք...

Մեր ազգային հերոս Անդրանիկն ասել է, որ երբ գլուխդ դնում ես բարձին մտածիր քո ազգի մասին: Եկեք կտրվենք մեր առօրյա հոգսերից և մտածենք մեր ազգի մասին ու այնպես անենք, որ ոչ ոք իր հայրենիքը չլքի:

Արևհատ Սաֆարյան
Կրասնոդար

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ

2007թ. ապրիլին Լոս Անջելեսում «Օսմանյան կայսրությունում հայերի բռնի մահմեդականացման հետևանքները» թեմայով դասախոսություններով հանդես եկավ Երևանի պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԸ**: Նա դասավանդում է ժամանակակից թուրքերեն, թուրքական նոր և նորագույն շրջանի գրականություն, ինչպես նաև թուրքական աղբյուրագիտության ու պատմագրության հիմնահարցերին նվիրված հատուկ դասընթաց: Մեր ընթերցողներն, անշուշտ, հիշում են «Ձայն համշենականի» 2006թ. N 9-10-ում տպագրված նրա «Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման հետևանքները» հոդվածը, որը ընթերցողների շրջանում շատ լայն արձագանք գտավ: Այս անգամ նա, չմոռանալով համշենցիներին, տարածքային և ժամանակային ավելի լայն ընդգրկում ունեցող նյութ էր ներկայացրել: Երևան վերադառնալուց հետո **ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ** խնդրեցինք պատասխանել մի քանի հարցերի.

– Ո՞ր կազմակերպության հրավերով էիք մեկնել Լոս Անջելես և քանի՞ դասախոսությամբ հանդես եկաք:

– Հրավիրողը Լոս Անջելեսի «Արարատ ֆաունդեյշընն» կազմակերպությունն էր, որն արդեն մեծ ճանաչում ունի տեղի հայության շրջանում: Դասախոսություններ կարդացի «Պոլսահայերի», «Իրանահայերի» միություններում, Հայ Ավետարանական եկեղեցու սրահում և Գլենդեյլի հանրային գրադարանում:

– Ձեր դասախոսությունների մասին «Ասպարեզ» և «Նոր օր» թերթերում տպագրված հոդվածներից դատելով, դրանք անցել են լեփ-լեցուն դահլիճներում. ո՞րն էր նման հաջողության պատճառը:

– Երևի հանդիպումների մարդաշատությանը նպաստեցին «Հորիզոն» և այլ հեռուստաընկերություններին տված իմ մի քանի հարցազրույցները, թերթերում տպագրված հոդվածները: Բացի այդ, հրավիրող կողմն արդեն իսկ շատերին տեղյակ էր պահել ներկայացվող նյութի մասին և, գլխավորը՝ մահմեդականացված հայության թեման այսօր որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքում:

– Իսկ ունկնդիրները դահլիճից Ձեզ ի՞նչ հարցեր էին տալիս:

– Ամենատարբեր: Եվ ցավալի էր տեսնել մեր հայրենակիցների անտեղյակությունը: Այսօր, փաստորեն, հայությունն ինքն իրեն ճանաչելու շատ մեծ խնդիր ունի. ու՞մ կարելի է հայ համարել, որքա՞ն ենք, որտե՞ղ ենք սփռված, ի՞նչ կրոնական, լեզվական, ազգագրական տարբերություններ ունենք և այլն: Թուրքիայում, արաբական երկրներում կան հայկական արմատներով կրոնափոխ բեկորներ, որոնք ուսումնասիրության կարոտ են: Ինձ զարմացրեց նաև այն, որ նույնիսկ պոլսահայերը շատ վատ գիտեն գավառահայությանը և հայկական ծագումով մահմեդականներին: Հանդիպումների ժամանակ ինձ շատ էին հարցնում նրանց թվաքանակի, տարաբնակության մասին, լինում էին նաև սադրիչ հարցեր. եթե վաղը մահմեդականացված հայերի սերունդները գան, Հայաստանի կառավարությունը պատրա՞ստ է հարյուր հազար մարդու տեղավորել, աշխատանքով ապահովել, կամ նրանց առջև կդրվի՞ քրիստոնեությանը վերադառնալու պահանջ և այլն: Շեշտեմ, որ այսօր նման խնդիր չկա բարձրացված և անհրաժեշտ է խուսափել հայկական ծագումով մահմեդականների գոյության փաստի ավելորդ քաղաքական շահարկումներից: Ոմանք չէին տարբերակում դասախոսին և պետական բարձրաստիճան պաշտոնյային և ինձ խնդրում էին պատասխանել հարցերի, որոնք իմ իրավասության մեջ չէին: Բայց այդ հարցերին պետք է, ի վերջո, գտնվեն պատասխաններ և հիմնախնդիրն այսօր ունի պատմական, ազգագրական, հոգեբանական, կրոնական, քաղաքական համակողմանի ուսումնասիրության կարիք: Տվյալ դեպքում ես խոսում էի համշենահայության մահմեդականացված հատվածի պատմության, բարբառի, ազգագրության, երգարվեստի մասին: Դասախոսություններն ավելի շատ ուղղված էին մանրամասնելու և լուսաբանելու Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդական ժողովուրդների՝ հատկապես հայերի նկատմամբ կիրառված մահմեդականացման-ձուլողականության քաղաքականության մեթոդները, նպատակներն ու հետևանքները:

– Վերջին տարիներին Հայաստանից արտագաղթի հետևանքով տարբեր երկրներ, այդ թվում ԱՄՆ են մեկնել նաև շատ համշենահայեր, առիթ եղա՞վ հանդիպելու նրանց:

– Այո՛, օրինակ, Գլենդեյլի հանրային գրադարանում, իմ դասախոսության վերջում բեմ բարձրացավ արդեն շուրջ մեկ տասնամյակ ԱՄՆ-ում հաստատված երևանցի ուսուցչուհի Ծաղիկ Գուրունյանը, որն աբխազահայ ճանաչված մտավորական և գրող Հակոբ Գուրունյանի դուստրն է, և Համշենի բարբառով հուզիչ խոսք ասաց, որից դահլիճի մի քանի հարյուր հանդիսատեսները, որոնց մեջ կային նաև Հայաստանից և Աբխազիայից արտագաղթած համշենահայեր, նրա հետ հուզվեցին և ոմանց աչքերում նույնիսկ արցունքներ երևացին: Այո՛, հայրենաբաղձությունը խեղդում էր ոչ միայն Ծաղիկ Գուրունյանին, այլև շատ ու շատ մեր հայրենակիցներին:

– Ծաղիկ Գուրունյանին ես ճանաչում եմ, նա մեր «Համշեն» հայրենակցական միության ամենաեռանդուն անդամներից էր, այժմ նրա և մեր մյուս հայրենակիցների բացակայությունը շատ է զգացվում:

– Շարունակելով միտքս ասեմ, որ դասախոսությունների ընթացքում, որպես կրոնափոխ համշենցիների կյանքից պատկերներ ցուցադրում էի համշենցի երիտասարդ, տաղանդավոր բեմադրիչ Ալփեր Օզջանի «Մոմի» (Մեծ մայր) կարճամետրաժ գեղարվեստական կինոնկարը, որը նկարահանվել է հենց մահմեդական համշենցիների շրջանում և շատ քնարական ոճով պատմում է դեռահաս Մարթեի և մի աղջնակի՝ Լուսնիկայի սիրո մասին: Ֆիլմն ամբողջովին Խոփայի համշենցիների բարբառով է և միաժամանակ ներկայացնում է յայլաներում նրանց այսօրվա կենցաղը:

– Ի դեպ, այդ ֆիլմը 2001թ. դեկտեմբերին ներկայացված էր Երևանում կայացած «Մասնավոր հայացք» միջազգային երկրորդ կինոփառատոնին և արժանացավ «Լավագույն ազգային ֆիլմի համար» մրցանակին: Քանի որ բեմադրիչը ներկա չէր, ես որպես ֆիլմի թարգմանիչ և «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ, մրցանակը՝ «Արծաթե հրեշտակի» արձանիկը ստանալով ուղարկեցի Ստամբուլ, որտեղ «Ակօս» թերթի խմբագրությունում, հանդիսավոր պայմաններում հանձնվեց Ալփեր Օզջանին:

– Ֆիլմում հնչում է նաև Խոփայի բարբառով մի անզուգական երգ: Ես դահլիճին ներկայացնում էի նաև վերջին տարիներս Թուրքիայում թողարկված մի քանի խտասկավառակներ (CD), որոնցում Խոփայի շրջանի կրոնափոխ համշենցիներն իրենց բարբառով երգում էին մի շարք հրաշալի երգեր, որոնք նույնպես շատ հուզիչ էին: Միշտ դահլիճով հուզմունքի ալիք էր անցնում, երբ լսում էին «Վովա» խտասկավառակի «Ասա՛, օնդեր, ասա՛» երգը.

Ասա՛, օնդեր, ասա՛, քու դարդէդ շադ ա,
Բազի բիր քալէ գուս օղնիվէր փադա,
Քա՛, քու հաքուդ գաբան մերաքլի խադ ա,
Բազի բիր քալէ գուս սարնիվէր փադա...

Եթե դեմ չեք, ես, երևի, առաջիկայում այս երգերի մասին հոդված կգրեմ «Ձայն համշենականի» համար և զուգահեռ կներկայացնեմ այդ երգերի գրական հայերեն թարգմանությունները:

Ելույթներիս ընթացքում ես էկրանին ցուցադրում էի նաև քարտեզներ և բազմաթիվ լուսանկարներ ոչ միայն Համշենից, այլև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից:

– Իսկ Դուք եղե՞լ եք Արևմտյան Հայաստանում:

– Այո՛, երկու անգամ, և բացի զբոսաշրջիկներին արդեն քաջ հայտնի քաղաքներից՝ Վան, Կարս, Անի, եղել եմ նաև Տրապիզոնում, Արդվինում, Շավշեթում, Գյումուշխանեում, հատուկ գնացել եմ Ալաշկերտ՝ իմ պապերի հայրենի Խաստուր գյուղը, լուսանկարել եմ Բաբերդի բերդը, Սպերը, Դերջանը...

– Վերջին վայրերն այցելել եք, երևի, Ձեր գրքի առնչությամբ: Ձեր «Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում» գիրքը, որի գինեծոնը, ինչպես տեղեկացա մամուլից, կատարվել է հենց Գլենդեյլի հանրային գրադարանում, ես կարդացել եմ: Վստահաբար կարող եմ ասել, որ այն ծանր, մանրակրկիտ, հոգնատանջ աշխատանքի արդյունք է: Ես երջանիկ կլինեմ, եթե մի օր էլ նման լուրջ ուսումնասիրություն հրատարակվի Համշենի, Սև գետի և հարակից գավառների օսմանյան աշխարհագիր մատյանների մասին, որոնք անգնահատելի տեղեկություններ են հաղորդում գյուղերի վաղնջահայկական անունների, տների քանակի, բնակչության թվի, կրոնական, ազգային պատկանելության, գյուղատնտեսական մշակումների, զբաղմունքի, հարկերի չափի և այլնի մասին:

– Շնորհակալություն գնահատանքի համար: Ինչ վերաբերում է Համշենին, Սև գետին և, ընդհանրապես, տարածաշրջանին, ես ձեռքիս տակ ունեմ թուրքերեն արժեքավոր նյութեր Տրապիզոնի վիլայեթի մասին և պատրաստվում եմ առաջիկայում դրանք ևս թարգմանելով դնել գիտական շրջանառության մեջ: Այդ հայաշխարհի անցյալը ճանաչելու համար, ցավոք, շատ քիչ վավերագրեր կան, իսկ ներկայի մասին, շուրջ մեկդարյա լռությունից հետո, ի ուրախություն մեզ, արդեն հրապարակվում են ճանապարհորդների և զբոսաշրջիկների տպավորությունները, որոնք կարևոր փաստեր են պարունակում: Ասեմ, որ Գլենդեյլում ծանոթացա Ջավեն Խանճյանի հետ, որը «Ասպարեզ» թերթում տպագրել էր Արևմտյան Հայաստան կատարած իր ուխտագնացության նոթերը՝ «Քելէ էրթանք մըր էրգիր» վերնագրով: Նա ասաց, որ Խոփա քաղաքում և Բորչքա ավանում հանդիպել և հայերենով զրուցել է կրոնափոխ համշենցիների հետ: Բորչքայում նա իր մոտ եղած «Ձայն համշենական» թերթի օրինակը, որը ձեռք էր բերել Երևանում կայացած Հայրենիք-Սփյուռք համաժողովի ժամանակ, ցույց է տվել համշենցի նպարավաճառ Ռամատանին, որը ցանկացել է թերթն իր հարազատների և ընկերների համար պատճենահանել: Պարոն Խանճյանը թերթը նվիրել է նրան, ինչը համշենցի երիտասարդին մեծ ուրախություն է պատճառել: Ես Ձեր համար հետս բերել եմ այդ մասին պատմող «Ասպարեզի» մարտի 31-ի համարը:

– Շնորհակալություն հարցազրույցի և թերթի համար, մաղթում եմ Ձեզ գիտական նորանոր հաջողություններ:

Զրուցեց
ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374+10) 25 21 26: Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

"ДЗАЙН АМШЕНАКАН" (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации "АМШЕН" (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 25 21 26. "HAMSHEN" Compatriotic-charitable public organization (Yerevan).
"DZAYN HAMSHENAKAN". Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 25 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com

Ծավալը՝ 8 էջ, տպաքանակը՝ 1000 օրինակ, ստորագրված է տպագրության 25.05.2007թ.: Անվճար